

ԱՐՑԱԽԻ ՄԵԼԻՔԱԿԱՆ ՏՆԵՐԻ ՏՈՀՄԱԾԱՌԵՐԸ (Նիւթեր հայոց մելիֆուքիւնների մասին)

(Շար. «Բազմավէպ» 162 [2004] էջ 93-121)

ԳԼՈՒԽ Դ

ՎԱՐԱՆՂԱ ԳԱԻԱՌԻ ՏԻՐԱԿԱԼ ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՆԵՐԻ ՏՈՀՄԱԾԱՌԸ

Վարանդա զաւառի մելիքութեան տարածքը սկսում էր Կարկառ գետից եւ տարածւում մինչեւ Քիրա-Դիզափայտ լեռնագօտին: Ժէ. դարի սկզբից Վարանդա զաւառի տիրակալներն էին Մելիք-Շահնազարեանները, որոնց իշխանանիւստը Աւետարանոց (Չանախչի) բերդաւանն էր: Այստեղ «Ժամանակին երեք մելիփական ապարանքներից բաղկացած պալատական համալիր է եղել, որոնցից միայն մէկն է հատուածաբար մեզ հասել եւ գտնուում է քերդապարսպի դարպասներից մի փոքր արեւելք՝ դարաւանդի վրայ»¹: Սոյն գլխում համառօտ ներկայացուած են Մելիք-Շահնազարեանների ազգաբանութիւնը եւ տոհմածառը:

Միջնադարեան Հայաստանի եւ Վրաստանի կեանքում չափազանց մեծ դերակատարութիւն ունեցած «Զափարիա սպասալարն ու Իվանէ աքաբէկը ունեցել են 3 քոյրեր՝ Նանա, Դօփ եւ Խոթիշահ»², ու նրանց քոյր Դոփից առաջացած Դոփեան իշխանական տոհմից է ԺՁ. դարի սկզբում սերուել Գեղարքունիքի Մելիք-Շահնազարեանների տոհմը, որի ներկայացուցիչ Միրզաբեկը Ժէ. դարի սկզբին բնակութիւն է հաստատել Վարանդայի

¹ ՂՈՒԼԵԱՆ Ա., Արցախի եւ Սիւնիքի մելիփական ապարանքները, Երեւան, 2001, էջ 89.

² ՏԵՐ-ՄԿՐՏՉԵԱՆ Կ., Դօփեանք եւ Մելիք-Շահնազարեանք, «Նիւթեր հայ մելիֆուքեան մասին», պրակ Բ, էջմիածին, 1914, էջ 31, նաեւ՝ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ Գ., Մատենադիտական տեղեկութիւններ Դոփեանների մասին, «Պատմա-բանասիրական հանդէս» (այսուհետեւ՝ «ՊԲՀ»), 1969, թիւ 1, էջ 217.

³ ՏԵՐ-ՄԿՐՏՉԵԱՆ Կ., նշ. աշխ., էջ 97 եւ յաջորդ էջերում:

Աւետարանոց գիւղում եւ այնտեղ սկիզբ դրել Մելիք-Շահնազարեանների տիրապետութեանը:

Սոյն Միրզաբեկի՝ Վարանդայի Աւետարանոց գիւղում հաստատուելու մասին Ս. Զալալեանցը գրում է. «Վերանորոգող մեծաշէն գիւղաքաղաքիս եղեւ մէլիք Միրզաբեկ որդի մէլիք Մելիքբեկի, թոռն Ապովայ տեառն Գեղամայ, եղբայր Շահնագարայ՝ տեառն Գեղարքունոյ, քանզի ի զօրանալ Կովկասական ասպատակաց եւ յարձակիլ ի վերայ նահանգին Գեղամայ ի թուին Հայոց ՌԼԱ. (1582), որպէս երեւի ի տապանագիրս այնր գաւառի թէ «ի փոխիլ Ղուզիլքաշին Տաղստանայ Լեկզին՝ որ գաւառս աներեցաւ թվին ՌԼԱ.-ին»: Այնուհետեւ սկիզբն եղեւ աներանաց բարերեր աշխարհին Գեղամայ. վասն որոյ եւ բնակիչք նորա անապարեալ անկան յամուրս Արցախու եւ Գարդմանայ, յայնժամ եւ Մելիքբեկ ընտանեօք իւրով էջ ի գիւղն Աւետարանոց եւ սկիզբն արարեալ վերանորոգեաց զսա եւ շէնացոյց որպէս վայելն էր իւրումն փառաց եւ պատուոյ, յորոյ սերնդոց ելին արք հօգօք եւ անուանիք. եւ եղեն տիրապետողք այսոցիկ գաւառաց»⁴: Հետագայում այս տեսակետը գրեթէ նոյնութեամբ մէջբերել է նաեւ Մ. Սմբատեանցը⁵:

Այն, որ Մելիք-Շահնազարը ունեցել է Միրզաբեկ անունով կրտսեր եղբայր, ակնյայտ է դառնում Կ. Տէր-Մկրտչեանի հրատարակած հետեւեալ յիշատակարաններից.

«Դարձեալ յիշեցէ՛ք գպարոն(աց պարոնն եւ զիշխանաց) իշխանն զմելիք Շահնագարն) եւ գհայրն իւր զՄելիքբեկն եւ զմայրն իւր գպարոն Խաթունադէն եւ գկենակիցն իւր պարոն Ֆարխրի(ջահ)անն եւ զիշխանատիպ որդիքն իւր՝ զՀախնագար(քե)կն, զԷսայրբեկն եւ զԴիւանջի քեկն եւ զՔամալբեկն եւ

«Դարձեալ յիշեցէ՛ք ի Քրիստոս գպարոնաց պարոնն եւ զիշխանաց իշխանն՝ զՄելիք Շահնագարն եւ գհայրն իւր զՄելիքբեկն եւ զմայրն իւր գխաթունադէն եւ գկենակիցն իւր գպրն Ֆարխրիջահանն եւ զիշխանատիպ որդիքն իւր՝ զՀախնագարբեկն եւ զԷսայրբեկն եւ զԴիւանջի քեկն եւ Քամալ քեկն

⁴ ԶԱԼԱԼԵԱՆՅ Ս., Հանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, հ. Բ, Տըփուխ, 1858, էջ 247:

⁵ ՄՄԲԱՏԵԱՆՅ Մ., Տեղեկագիր Գեղարքունի Մովսէսարդ գաւառի, Վաղարշապատ, 1896, էջ 810:

զԱվրիբեկն, եւ գդուստրն իւր զԽաթունադէն, եւ զփոխեցեալսն առ Աստուած՝ զպարոն տէր Յոհանէսն եւ զպարոն տէր Տէրունն եւ զԹահիրն եւ զՇիրին-պաջին, եւ զհամեստ հարսունքն իւր՝ զպարոն Վախախն եւ զԹա-նումադէն եւ զԱղայ-սուլթանն, եւ զնորաբողոքոջ որդիքն, թոռն իւր զՆադդին, եւ զհարազատ եղբայրսն իւր՝ զպարոն Ատի-բեկն, որ տարածամ մահուամբ փոխեցաւ առ Քրիստոս, եւ զԳաւգչայբեկն եւ որդին իւր զԼաւանդրեկն, եւ զՄիրզաբեկն եւ որդի իւր զԲադրիսանն, եւ զայլ ամենայն արեան մերձա-ւորսն իւր»:

եւ զԱվրի բեկն, եւ գդուստրն իւր զԽաթունադէն. եւ զփոխե-ցեալսն առ Աստուած՝ զպրն Տէր Յոհանէսն եւ զպրն Տէր Տէ-րունն եւ զԹահիրն եւ զՇիրին-պաջին. եւ զհամեստ հար-սունքն իւր՝ զպրն Վախախն եւ զԹառումադէն եւ զԱղայսուլ-թանն. եւ զնորաբողոքոջ թոռն իւր զպրն Նադդին. եւ զհարա-զատ եղբայրսն իւր՝ զպրն Ա-տիբեկն, որ տարածամ մա-հուամբ փոխեցաւ առ Աս-տուած, եւ զԳաւգչայ բեկն եւ զորդին իւր զԼաւանդր բեկն. զՄիրզաբեկն եւ որդին իւր զԲադրիսանն. եւ զայլ ամենայն արեան մերձաւորսն իւր»⁶:

Սակայն Կ. Տէր-Մկրտչեանը մերժել է Ս. Զաւալեանցի ա-ռաջարկած 1582 թուականը, հիմնաւորելով, որ թէեւ վերջինս «Միրզայ բեկի տեղափոխութիւնը Սոթֆից վարանդայ եղած համարում է 1582 թուին, երբ Լեկզիք արշաւել անելով եւն Գեղարքունիքը, եւ այն ժամանակից սկսուել է այդ գաւառի աներումը եւ բնակիչների ցիրուցան լինելը: Սակայն նորա յի-շած արձանագրութիւնը, որի հիման վրայ նա այդ թուին ա-ւերում է համարում Գեղամայ երկիրը, մենք ոչ մի տեղ չենք գտնում եւ տեսնւմ ընդհակառակն, թէ դեռ 1606 թուին ինչպէս շէն էր այդ գաւառը, կամ Միրզայ բեկի հօր տունը: Այլ եւ Ծարեցու պատմելով սոսկալի սով էր այդ թուին վա-րանդայում, եւ ուրեմն անելի շուտ այնտեղից մարդիկ կը փախչէին, քան թէ Միրզաբեկի պէս մի մեծատուն իշխան այն-տեղ կ'երթար: Շատ անելի հաւանական է, որ նորա տեղափո-խութիւնը կատարուած լինի նոյն 1603 թուին, երբ Մելիք Շահնագարն էլ ստիպուած էր Ծարում ապաստան գտնել»⁷:

⁶ Տէր-Մկրտչեան Կ., նշ. աշխ., էջ 189-190, 194:

⁷ Նոյն տեղում, էջ 133-134:

Վերջին վարկածի օգտին է խօսում նաեւ այն փաստը, որ պատմիչ Յովհաննէսիկ Ծարեցին 1572-1600թթ. անցքերն ընդգրկող իր ժամանակագրութեան մէջ, ցնցող դոյներով նկարագրելով Վարանդա գաւառում 1579-1580թթ. տեղի ունեցած սովը⁸, ոչինչ չի հաղորդում նման մի տեղափոխութեան մասին:

Իսկ ահա 1603թ. տեղի ունեցած այդպիսի մի տեղաշարժի մասին վկայութիւն, իրօք, գտնում ենք Դաւիթ եպիսկոպոսի գրած յիշատակարանում. «Յորժամ եղեւ գարուն, այս բարեմիտ եւ իմաստուն իշխանս պարոն Մելիք Շահնագարս, իմացաւ զոխս սրտից Օմար ազգին, հրաման արար երկրիս, թէ «Եկայք մոտոյ՛ յամուրս, զի մի՛ լիցուի կոխան այլազգաց» եւ իմքն գնաց ի Ծար եւ ի Տպէ: Եւ որք զհետ նորա գնացին, զերծան ի սրոյ եւ ի գերութենէ այլազգեաց»⁹: Տպէլի տեղագրութեան հարցը պարզած Ա. Յակոբեանը եւ Յ. Սիմոնեանը ենթադրում են, որ «Մելիք-Շահնագարը ամենայն հաւանականութեամբ հետապնդումներից խուսափելու համար նախ անցել է Ծար, ապա երբ վտանգը աւելի է սաստկացել՝ Տուոխուի հովիտը՝ Տպէլ»¹⁰: Հաւանաբար այդ ժամանակ էլ Մելիք-Շահնագարի եղբայր Միրզաբեկը հաստատուել է Վարանդայի Աւետարանոց գիւղում: «1606թ. Շահնագարը նոր էր մահացել, որ շահ Աբաս Ա.-ը այցելեց մելիքանիստ Մեծ Մագրա, վայելեց Շահնագարի որդիներ Օրիի (Եւրի) ու Քամալ-բեկի հիւրընկալութիւնը, հրամանագրով նորից նրանց հաստատեց գաւառի տէր՝ նուիրելով նաեւ ուրիշ գիւղեր ու դաստակերտներ, իսկ մելիք Շահնագարի կրտսեր եղբայր Միրզա-բեկին էլ մելիք կարգեց Վարանդայում»¹¹:

Մինչեւ սոյն Միրզաբեկի՝ Վարանդայի մելիքի պաշտօնում հաստատուելը, այնտեղ իշխել է մէկ այլ հայկական մելիքական

⁸ «Ճոռաբաղ», Մոսքուա, 1859, տետր Գ, էջ 73-75, Պատմութիւն Առաքել վարդապետի Դարիթեցւոյ, Վաղարշապատ, 1896, էջ 608-611, Մանր ժամանակագրութիւններ ԺԳ.-ԺԸ. դդ., հ. 2, Երեւան, 1956, էջ 242-244:

⁹ Տէր-Ա.Ի.ՅՏԻՍԵԱՆ Ս., Յուցակ հայերէն ձեռագրաց Նոր Զուղայի Ամենափրկիչ վանքի, հ. Ա, Վիեննա, 1970, էջ 68, Հայերէն ձեռագրերի ԺԵ. դարի յիշատակարաններ (1601-1620թթ.), հ. Ա, Երեւան, 1974, էջ 218:

¹⁰ ՅԱ.ԿՈՒՅԵԱՆ Ս., ՍԻՄՈՆԵԱՆ Յ., Դադիվանքի նորայայտ արձանագրութիւնը եւ Տպէլի տեղադրութեան հարցը, «ՊԲՀ», 1998, թիւ 1-2, էջ 230:

¹¹ ՈՒՆՈՒԲԱՅԵԱՆ Բ., Արցախի պատմութիւնը սկզբից մինչեւ մեր օրերը, Երեւան, 1994, էջ 132:

տուն, որի ներկայացուցիչների այսպիսի մի հերթականութիւն է վիմագրերի հիման վրայ տալիս Մ. Բարխուտարեանցը. «Մելիք-Պապի որդի Հախիջանայ, Մելիք-Աւան որդի Մելիք-Պապու, Մելիք-Աղամ եղբայր Մելիք-Աւանայ, Մելիք-Փաշայ կամ Փաշիկ որդի Մելիք-Աւանայ, Մելիք-Դանիել, Մելիք-Մուգաֆֆար, որ է տոհմիս վերջին մելիքն»¹²: Վարանդա գաւառում տեղի ունեցած իշխանափոխութեան մասին Լէոն գրում է. «Այս տոհմը ետ մղուեց Մելիք-Շահնագարեաններից, որոնք եւ իրենց ձեռքն առան ամբողջ Վարանդան»¹³: Այդ պատմութեան վրայ որոշակի լոյս է սփռում Միրզաբեկի որդի Մելիք-Բադի Ա-ին (Բադրխան, Բադրխան) Իրանի շահ Սեֆու (1629-1642) կողմից 1633թ. տրուած հետեւեալ հրովարտակը, որի պատճէնը Ս. Լազրեւից ստանալով հրատարակել է Մ. Բարխուտարեանցը.

«Բարձրագոյն հրաման եղաւ... Նշանաւոր քրիստոնեայ Մելիք-Բադին յայտնում է, թէ Վարանդայ գաւառի բնակիչները, նոյն գաւառի տանուտէրների կազմած հասարակական վեոռով ընտրել եւ ճանաչել են զինքը իրանց մելիք, բայց յիշեալ գաւառի շրջաններից մի քանիսն՝ Մելիք Դանիելը... Թագաւորին մերձաւոր բարձր աստիճանաւորներն -Սաֆի-դուլի քէկ եւ Ալի-Մարդան քէկ իւզբաշին, Մամէդ-Բադր-քէկ եւ ուրիշներն հաստատել են հպատակների հասարակական վեոռը: Այդ բանը վաւերացնելու համար ներկայացնելով վերել յիշուած հասարակական... (Մելիք-Բադին) խնդրում է նշանակել զինքը մելիք յիշեալ գաւառին:

Արժունի օրագրից երեւում է, որ այդ գաւառի պարտականութիւնը (մելիքութիւնն) յանձնուած էր Մելիք-Մուգաֆֆարին... Մելիք-Մուգաֆֆարն հասարակական այդ վեոռի վերայ մակագրել է, որ ինքն հրաժարում է յիշեալ գաւառի մելիքութեան պաշտօնը կատարելուց եւ որ նորա եղբոր մահից յետոյ ոչ ոքի յանձնուած չէ այդ պաշտօնի կատարելն:

Ուստի յարգելով նորա (Մելիք-Բադու) խնդիրը, մենք հրամայեցինք, համաձայն հասարակական վեոռին, որը կազմել են Մելիք-Մուգաֆֆարն եւ ուրիշներն, մեր թագաւորական միւս շնորհների մասն «Լույ-իլ» (կոկորդիլոսի տարին) ամսի

¹² ԲԱՐԽՈՒՅԱՐԵԱՆՑ Մ., Պատմութիւն Աղուանից, Կ. Բ, Թիֆլիս, 1907, էջ 40-41.

¹³ ԼէՕ, Հայոց պատմութիւն, Կ. 3, Երեւան, 1946, էջ 748.

չլինի եւ ոչ ամենափոքր ննշում եւ կողմնապահութիւն, իսկ վերոյիշեալ կալումսի հպատակները եւ ստորադրեալները պարտաւոր են համարել նրան լիազօր տէր, չշեղուել նրա հրամաններից եւ կարգադրութիւններից, որոնք վերաբերում են կալումսի մեծացնելուն եւ քարեշինելուն, առանց նրա գիտութեան ամենափոքր իրաւունքներ եւ արտօնութիւններ անգամ չհրացնել, համարել տիրողի բոլոր իրաւունքները նրան շնորհուած, չտալ նրան օգնական կամ ընկեր, ընդունել որ այս կարողութիւնը պատկանում է նրան ըստ սովորութեան եւ նախկին տիրողների օրինակով, իսկ վերոյիշեալ մեղիքը պարտաւոր է վարուել այնպէս, որ ամէնք գոհ լինեն նրանով եւ վերջապէս կատարել այս հրամանը, որ հաստատուած է թագաւորական կնիքով: Տրուած է Ջուլիիջա ամսին 1055թ. (1646թ. յունուարի 18-ից փետրուարի 17-ը)»¹⁵:

Հետագայում հաւանաբար հէնց Մելիք-Շահնազարն էլ իր ծնողների յիշատակին Աւետարանոցի եկեղեցուն մի խաչ է նուիրել, որի արձանագրութիւնը ընդօրինակել է Ս. Զալալեանցը. «Սուրբ խաչս յիշատակ է մելիք Բաղուն եւ իւր կողակից Մաքիամին ի դուռն Ամարասայ. Թվին Հայոց ՌՃԺ (1661)»¹⁶:

Մելիք-Շահնազար Ա-ը որպէս Վարանդայի տիրակալ յիշուում է նաեւ 1673-ին, համաձայն Հերհեր գիւղի Ս. Գրիգորիս եկեղեցու արեւմտեան դռան ճակատակալ քարին փորագրուած սոյն արձանագրութեան. «Զարութեամբն Աստուծոյ շինեցաւ սուրբ եկեղեցիս ի դառն եւ ի նեղ Ժամանակիս, վասն ծովացեալ մեղաց մերոց եկն մարախ եկեր գերկիրս Աղուանից եւ աւերեաց բազում տեղիս ի թագաւորութեան Շահ Սուլեմանին, պարոնութեան Միրզա Ղուլի քէկին եւ իշխանութեան երկրիս Վարանդու Մելիք Բաղու որդի Մելիք Շահնազարին եւ օժանդակութեան Ովանիսին եւ քահանայից եւ տանուտեարց, մեծամեծաց եւ փոքունց ամէն. Թվին ՌՃԻԲ (1673)»¹⁷:

Մելիք-Շահնազար Ա-ին յաջորդել է որդին՝ Մելիք-Բաղիր կամ Բաղի Բ-ը, որի գործունէութեան վերաբերեալ պահպանուել

¹⁵ ԼէՕ, Հայոց պատմութիւն, հ. 3, էջ 500-501:

¹⁶ ԶԱՆԱՆԱՅ Ս., *Կ. աշխ.*, հ. Բ, էջ 248, Դիւան հայ վիմագրութեան (աշտուհեան՝ Դիւան), V, Արցախ, Երեւան, 1982, էջ 152:

¹⁷ ԲԱՐՈՒԻՏԱՐԵԱՆ Մ., Աղուանից երկիր եւ դրացիք: Արցախ, Երեւան, 1999, էջ 214, ԼԱՆԱՅԵԱՆ Ե., *Երկեր*, հ. 2, Երեւան, 1988, էջ 37:

ութին... Մելիք-Բաղին մելիք Վարանդայի գաւառին, որն առաջ յանձնուած էր Մելիք-Մուզաֆֆարին եւ Ղարա-Կիւնին... Տաճկաց 1042 (1633) թւին»¹⁴:

Սոյն հրովարտակից երեւում է, որ Մելիք-Մուզաֆֆարը, հաւանաբար, չկարողանալով դիմակայել առաւել հզօր այս տոհմին, հրաժարուել է «յիշեալ գաւառի մելիքութեան պաշտօնը կատարելուց» յօգուտ Մելիք-Բաղու, որին էլ Վարանդայում յաջորդել է որդին՝ Մելիք-Շահնազար Ա-ը: Այդ մասին ստույգ տեղեկութիւններ ենք գտնում Շահ-Աբբաս Բ-ի (1642-1666) կողմից 1646թ. նրան տրուած հրովարտակում, որի սկիզբը իրենից ներկայացնում է նախորդ հրովարտակի հակիրճ վերաշարադրութիւնը.

«Համաձայն բարձրագոյն հրամանի, որ տրուած է Հիշրեթի 1042 թուականի Ռեջեբ ամսում (1633թ. յունուարի 12-ից փետրուարի 11-ը) Արանի Վարանդա կալուածի տիրապետութիւնը յանձնուած էր Մելիք-Բաղի քրիստոնէային հպատակների գրաւոր համաձայնութեամբ, որ վաւերացրել եւ ստորագրել էր Խափանի ամենահռչակաւոր եւ ամենափառաւոր կողմնակից Սեֆի-Կուլի-բեկը, շինութիւնների վերակացուն, ամենաբարձրապատիւ Ալիմերտան բեկի կառավարութեան ժամանակ:

Այժմ գերազանցագոյնը քրիստոնէականների մէջ, Մելիք-Շահնազարը, որդի վերոյիշեալ Բաղիի, եկաւ Դիւանը եւ յայտարարեց, որ իր հայրը քանաչուած էր տիրապետող եւ որ վերոյիշեալ կալուածի տանուտէրերը եւ հպատակները իրանց ստորագրութիւնները եւ կնիքները չլինել են այն խնդրագրի վրայ, որով քանաչոււմ են եւ Մելիք-Շահնազարին իրանց վրայ տիրապետող, իսկ ամենաբարձրապատիւ Սեֆի-Կուլի-բեկը նորից վաւերացրեց եւ ստորագրեց այն խնդրագիրը ի հաստատութիւն թէ նրանք ոչինչ որ քանաչոււմ են նրան իրանց տէր: Ուստի բարձրագոյն արքայական ողորմածութեամբ հրամայում ենք, որ ձայն տալու իրաւունք ունեցող անձինք համաձայն լինեն տալ չորրորդ մասը նրա տիրապետութեան, իսկ մա, Շահնազարը, պիտի ամեն տեսակ ջանք եւ եռանդ գործադրէ պահպանելու հպատակների եւ ստորադրեալների մէջ կատարեալ արդարութիւն եւ ուղղամտութիւն, գործելու այնպէս, որ

¹⁴ ԲԱՐԽՈՒՄԱՐԵԱՆՅ Մ., Պատմութիւն Աղուանից, հ. Բ, էջ 41-42:

են մի շարք վկայութիւններ: Այսպէս, Գանձասարի կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալեանն իր պատմութեան մէջ, նկարագրելով լեզգիների արշաւանքները, վկայում է, որ նրանք 1722թ. ապրիլին «անցան Վարանդա երկիրը, նոյնն (աւերն ու աւարը-Ա.Մ.) սկսեցին այնտեղ անել: Սակայն սրանց Պաղիւս անունով մելիքը փութով ընդառաջ ուղարկեց մի քանի մարդու իր ընծաներով, փրկեց գերիների կեսն ու իր երկիրը»¹⁸:

Մելիք-Բաղու գործունէութեան մասին որոշ տեղեկութիւններ էլ գտնում ենք 1723-1728թթ. հայ-ռուսական յարաբերութիւններն արտացոլող մի քանի փաստաթղթերում: Այսպէս, Մարտիրոս վարդապետի՝ 1724թ. փետրուարի 24-ին գրուած եւ Դերբենդի ռուսաց պարետին ուղղուած նամակում, որտեղ խօսք կայ նաեւ Արցախի մելիքների եւ իւզբաշինների քաղաքական կողմնորոշումների մասին, կարդում ենք. «Մելիք Պաղի բռնը մելիք Պաղըր կանա Կարմիր աչքի (պարսիկների - Ա. Մ.) կողմն է»¹⁹: Սակայն, նշենք, որ շուտով՝ 1726թ. մայիսին, Մելիք-Բաղին Արցախ ժամանակ Պետրոս Ա-ի պատուիրակ Իվան Կարապետին է տուել հաւատարմութեան հետեւեալ երդմնագիրը. «Գիրեցաւ էլչի Իվան Կարապետի հրամանովն:

Պատշառ գրոյս այս է. ես Վարանդեցի մելիք Պաղիս, տէր Օվանս, եւ այլ ջամհաթս, ամեն քօպուն քալեդս, այս գիրս դվինք վերայգրեալ էլչի պէկին հրամանոցն, խօսքէն, թէ եւ մապախաթէն դուս գանք, թագայորէն խային լինինք եւ մեր ապրանք սոնկ լինի:

Մեր կամով գիրեցինք գիրն ՌՃՀԵ (1726) թվին»²⁰:

Մելիք-Բաղրի ընտանիքի անդամների մասին կցկտուր տեղեկութիւններ են պահպանուել: Ե՛ւ այս, ե՛ւ, ինչպէս կը տեսնենք ստորեւ, միւս զէպքերում մելիքական ընտանիքների մասին

¹⁸ ԵՍՍՅԻ ՀԱՍԱՆ-ՋԱԼԱԼԵԱՆ, Համառոտ պատմութիւն Ադուանից երկրի, Երեւան, 1997, էջ 30, տե՛ս նաեւ ԿՈՍՏԱՆԵՆՅՑ ԱՌ., Դիզակի մելիքութիւնը, «Նիւրեր հայ մելիքութեան մասին», տրակ Ա, Վաղարշապատ, 1913, էջ 20:

¹⁹ ԱՐԲԱՀԱՄԵԱՆ Ա., Մի էջ Անդրկովկասի ժողովուրդների եւ հայ-ռուսական յարաբերութիւնների պատմութիւնից, Երեւան, 1953, էջ 40, Армяно-русские отношения в первой трети XVIII века, т. II, ч. II, Ереван, 1967, с. 72.

²⁰ ԱՐԲԱՀԱՄԵԱՆ Ա., նշ. աշխ., էջ 253, Армяно-русские отношения в первой трети XVIII века, т. II, ч. II, с. 291.

մեր զիտելիքները հիմնականում հարստացնում են Արցախի մեկիքութիւնների պատմութեան անփոխարինելի սկզբնաղբիւր հանդիսացող վիմազրերը: Մեկիք-Բաղրի կնոջ անունն անյայտ է, իսկ ահա Աւետարանոցի մօտ, Կուսանաց անապատում²¹ գտնուող Մեկիք-Շահանգարեանների տոհմական հանգստարանում պահուող մի տապանաքարի արձանագրութիւնից տեղեկանում ենք, որ.

«Այս է դապան մէլիք Պաղրի որդի մէլիք Միրզայեկին, թվին ՌՃՂԳ (1744), նոյեմբերի Ժ (10) առ...

Աստուած փոխեցաւ, օվ որ գարդա ողորմի ասի.

աւմէն»²²:

Իսկ Մեկիք-Բաղու դուստրերի անունները յայտնի են դառնում Աւետարանոցում Մ. Բարխուտարեանցի ընդօրինակած սոյն յիշատակարանի շնորհիւ. «Սուրբ աւետարան սրբագիր եւ ոսկեզօծ վախմ եւ յիշատակ է Աքրահամ պարոն-տէրին, որ տվան Մելիք Պաղուն կուսակրօն դստերացն Հոուրսիմին եւ Դաւլաթին եւ Շահանդուխտին ձեռքն ի վայելումն... գրեցաւ մատամբ տէր Եղիազարին մայիսի ԻԵ (25). օրն թվ. ՌՃՁԶ (1737). էր»²³:

Մեկիք-Բաղրի Բ-ը հաւանաբար 1730-ին արդէն վախճանողած էր, որովհետեւ այդ թուականին Իրանի շահ Թահմասպ Բ-ի (1722-1732) հրովարտակով Վարանդայի մեկիքի պաշտօնում նշանակուած ենք տեսնում Բաղրի եղբայր Մեկիք-Հուսէյնին: Անհրաժեշտ ենք համարում բերել այդ հրովարտակի ԺԹ. դառում կազմուած եւ մեզ հասած պատճէնի թարգմանութիւնը.

«Աշխարհասաստ հրամանագիր հրապարակուեց հետեւեալի կապակցութեամբ.

²¹ 1825թ. կազմուած Արցախի վանքերի ցուցակում Կուսանաց անապատը ներկայացուած է այսպէս. «Անշէն անապատ Կուսանաց, կառուցեալ մերձ գեղըն Աւետարանոց Վարանդայ գաւառակի, եկեղեցին ամբողջ, տանիք գալսին խախտեալ, յորում ամփոփեալ կան մարմինք ոմանց Մելիքաց ցեղին Մելիք-Շահանգարեանց, եւ այլոց հոգեւորականաց, սենեակքն քոյրովին կործանեալք (տե՛ս Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ, Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմը 1813-1933թթ., Երեւան, 2001, էջ 47):

²² Դիւան, V, Արցախ, էջ 149.

²³ ԲԱՐՍԻՍԱՐԵԱՆՅ Մ., Աղուանից երկիր եւ դրացիք, Արցախ, էջ 209.

Թոնգուզ երլի (խոզի տարուայ) չորրորդ ամսուայ սկզբից Վարանդա մահալի մելիփուքիւնը շնորհեցիմք բարձրաստիճան Մելիփ Մուհամմադ Հուսէյնին, որպէսզի ինչպէս հարկն է այդ գործը ստանձնելով նրա պարտականութիւնները առանց թերացման կատարի, ուսյաթների հետ, որոնք ամենագոր Արարչի որոնումների արժեքաւոր ձեռքբերումն են, լաւ վերաբերուի՝ այնպէս անելով որպէսզի բոլորը նրա բարի արարքներից գոհ ու շնորհակալ լինեն եւ որպէսզի բարի օրինանք յղեն սրբազան էութեանը: Վերոյիշեալ մահալի ֆեդխուդաներն ու ուսյաթները յիշեալ բարձրաստիճան պաշտօնեային պետք է այնտեղի մելիփ ճանաչեն, նրա օրինաւոր խօսքին ու կամքին, որ ուղղուած կը լինի մահալի շէնացմանը եւ դիւանի ունեցուածքի հարստացմանը, չհակառակուեն: Թող մեծ մուսթովֆիները այս ուղղամ-շնորհագիրը յարատեւող մատեններում գրանցեն եւ այն իրենց պարտականութիւնը համարեն: Գրուեց 1142թ. սրբազան զի հեջջէ ամսին (1730թ. յունիսի 17-ից յուլիսի 17-ը)»²⁴:

Մելիք-Հուսէյնը յայտնի է օսմանեան թուրքերի դէմ տարած մի քանի յաղթանակներով: Այդ մասին է վկայում Կուսանաց անապատի գաւիթ-գամբարանում գտնուող նրա տապանաքարի արձանագրութիւնը.

«Այս է տապան Մելիփ Շահնագարի որդի Մելիփ Յուսէի-նի, թվին ՌՃՁԵ (1736), ոգեմ գրանս գովեստի, ի վերայ Մելիփ Յուսէի-նի, զոր գրեցի այս տապանի: Սա էր տէր երկրին Վարանդի, ԼԵ (35) մասն գեղի, սա էր հացով, սեղանով լի, ողորմէր ամեն ազգի, կերպարանօքն էր գովելի, սա ոչ ետ

24

Երեւանի Մեսրոպ Մաշտոցի անուան Մատենադարան (այսուհետեւ՝ Մատենադարան), Կաթողիկոսական դիւան, թղթ. 2թ, վաւ. 173, պատճէն: Վաւերագրի հակառակ կողմում ռուսերէնով մակագրուած է. «Копия от грамоты Тахмасп Шаха»: Այս հրովարտակի թարգմանութեան համար շնորհակալ ենք Ք. Կոստիկեանին: Նա նաեւ ենթադրում է, որ փաստաթղթում Մելիք-Հուսէյնի «Մուհամմադ անունը կամ աւելացուել է քնագրի պատճեն կազմելու ընթացքում տեխստի սխալ ընթերցման արդիւնքում կամ մահմեդական միջավայրում նա այդ անունը եւս կրել է» (տե՛ս ԿՈՍՏԻԿԵԱՆ Ք., Թահմասպ II-ի հայերին ուղղուած հրովարտակները եւ 1730-31 թթ. նրա արշաւանքը դէպի Երեւան, «Մերձավոր եւ Միջին Արեւելքի երկրներ եւ ժողովուրդներ», XXIII, Երեւան, 2004, էջ 358):

հարկ թագաւորի, ամուր պարիսպ էր աշխարհի, թագ, պարծանք հայոց ազգի, պատերազմեաց հետ օսմանցի, յոյժ կոտորեաց ազգէն տանկի»²⁵:

Մելիք-Հուսէյնի կիրնը Դիզակ գաւառի տիրակալ Մելիք-Եգանի (մահ.1744) քոյր Աննա խաթունն էր: Աւանդութիւնը Մելիք-Հուսէյնի կիրն Աննա խաթունի եւ դուստր Գայիանէի անունները հետ է կապում մի գիշերում Արցախ թափանցած օսմանեան զօրամասի ոչնչացումը, ինչից յետոյ Գայիանէն մտնում է կուսանոց, նուիրւում գրչարուեստին: «Գայիանէ կոյսն, որ սրանեց Խամայիլ փաշին եւ գրեց սր Աւետարանն, որ շնուում է եկեղեցումն Չանաղչու»²⁶, - կարդում ենք Մատենադարանի ձեռագրերից մէկում: «Իմ 1881 թուի ցանապարհորդութեան ժամանակ, -գրում է Բաֆֆին, - Աւետարանոց գիւղում ինձ յաջողուեցաւ տեսնել մի հրաշալի գրչագիր աւետարան, որ գրուած էր նոյն Գայիանէի ձեռքով»²⁷:

Աննա խաթունը վախճանուել է 1747թ., ինչպէս վկայում է Կուսանաց անապատի դաւթում գտնուող նրա տապանաքարի սոյն արձանագրութիւնը.

«Այս է դապան մէլիք Զիսէին
գողակից Եանիա իսաթոռնինն,
թվին ՌՃՂԶ (1747)»²⁸:

Մելիք-Հուսէյնին յաջորդել է նրա եղբայր Մելիք-Բաղուորդի Մելիք-Միրզաբեկ Բ-ը, որի մասին չափազանց քիչ բան է յայտնի, այն էլ կապուած Իրանի Նադիր շահի կողմից մահապատժի ենթարկուելու հետ: Այսպէս, ԺԹ. դարի պատմագիր Միրզա Եուսուֆ Ներսէսովը (Յովսէփ Ներսիսեանց) այդ մասին

²⁵ ԲԱՖԲԻ, Երկերի ժողովածու, հ. 9, Երեւան, 1987, էջ 441, ԲԱՐԽՈՒՏԱՐԵԱՆՅ Մ., Պատմութիւն Աղուանից, հ. Բ, էջ 44-45, Դիւան, V, Արցախ, էջ 149:

²⁶ ՄԻՔԱՅԷԼ-ԲԵԿ ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆ, վասն ծագման Մելիք-Շահնազարեան տոհմին, Մատենադարան, ձեռ. 7429, էջ 9:

²⁷ ԲԱՖԲԻ, նշ. աշխ., էջ 441:

²⁸ Հայկական ճարտարապետութիւնն ուսումնասիրող կազմակերպութեան (RAA) նիւթեր, Ս. ԿԱՐԱՊԵՏԵԱՆԻ «Արցախի վիմագրերը» անտիպ աշխատութիւնից: Այն տապանագրերը, որոնց համար աղբիւր չի նշուած, վերցուած են վերոյիշեալ դիւանից:

գրում է. «Նադիր շահը նրանից (*Մելիք-Շահնազարեաններից - Ա.Մ.*) ումն Միրզաբեկի, յանցանք վերագրելով, պարանով խեղ-դամահ է անում եւ ասում. «Սա Շիրուլէների (*Կաւատ Բ-ի-Ա.Մ.*) ցեղից է»²⁹: Իսկ ահա Բաֆֆու գրչի տակ պարանը վերածուել է դահճի սրի: «Մելիք-Հուսէյնի փոխարէն Վարանդային սկսեց կառավարել նրա ազգական Մելիք-Միրզաբեկ, - գրում է Բաֆֆին, - դա իր յանդուգն անհնազանդութեամբ գրգռեց շահի բարկութիւնը, եւ շահը հրամայեց գլխատել նրան»³⁰: Այս դէպքը, ինչպէս վկայում է Մելիք-Միրզաբեկի տապանաքարի վերոբերեալ արձանագրութիւնը, տեղի է ունեցել 1744թ. նոյեմբերի 10-ին: Զի բացառում, որ այս Մելիք-Միրզաբեկի շառաւիղն է ուն Սարգիս-բեկ Շահնազարեան, որն իրեն ներկայացնում է որպէս այդպիսին: Ղարաբաղի վիճակային կոնսիստորիայի՝ 1844թ. սեպտեմբերի 30-ին Բաղդասար մետրոպոլիտին ուղղուած գրութեան մէջ այդ մասին կարդում ենք. «Ի կոնսիստորիիս յայսմիկ լուան զինդիր Հայկագուն ի բեկագնէից Սարգիս-բեկի Բադրբեկեան Շահնազարեանց ի 15 այսր սեպտեմբերի յանուն բարձրագոյն, յորում գրի-ցանկայ նա յորդոց իւրոց գեսային եւ գորիգորն այժմէն իսկ առաքեալ ի Սանկտպետերբուրգ ի կադէսիկի կօրպուսն. իսկ զԽաչատուրն նշանակեալ միայն ի նոյն իսկ կօրպուսն, եւ գիտելով չափ, թէ հարկաւոր է նոցա ունիլ առ ինքեան զմետրիքական վկայագիրս յաղագս ծննդեան նոցա մկրտութեան, վասն որոյ զայս խնդիր իւր արկեալ ընդ սուրբ Գարշապարդ Նորին Կայսերական Մեծութեան ի յայտ ածէ թէ՝ ծնեալ են - ի նոցանէ Նսային ի 1834 ամի, Գրիգորն ի 1836 ամի, իսկ Խաչատուրն ի 1842 ամի, եւ մկրտեալ են ի Շուշոյ Ղազանչեցոյ Ամենափրկչի եկեղեցւոյն: Հարկ համարի յայտ առնել, նախ՝ թէ, նա չունի առ ինքեան զարդիս պատրաստի զօրինաւոր վկայական վասն բեկագնէութիւն տոհմին իւրոյ, եւ երկրորդ, թէ չէ սերեալ նա ի Մելիք-Շահնազարէն Ղարապաղու, որոյ կանանց անուանքն են թանում, Սօնայ եւ Մալակ, այլ է թոռն Մելիք-Միրզաբեկին»³¹:

²⁹ ՄԻՐԶԱ. ԵՈՒՍՈՒՖ ՆԵՐՍԷՍՈՎ, Հշմարտացի պատմութիւն, Երեւան, 2000, էջ 42: Մելիք-Միրզաբեկի վախճանի մասին տե՛ս նաեւ Մատենադարան, ձեռ. 7429, էջ 43բ:

³⁰ ՐԱՖԳԻ, նշ. աշխ., էջ 451, ՄՈՒՍԱՅԷԼԵՍՆ Ն., Ղարաբաղի նուաճման հարիւրամեակը, «Արարատ», 1914, թիւ 9, էջ 240:

³¹ Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ, էջ 132:

Նազիր շահը իր հրամանով մահապատժի ենթարկուած մելիքի փոխարէն Վարանդայի տիրակալ է նշանակել Մելիք-Հուսէյնի աւագ որդի Մելիք-Յովսէփին: Վերջինիս մելիքութիւնը, սակայն, կարճ է տեւել: Մելիք-Յովսէփի կրտսեր եղբայր Մելիք-Շահնազար Բ-ը, որը «խելակորոյս սիրահարուած էր իշխանութիւն կոչուած գեղեցկուհու սրտամաշ աջերին»³², օգտուելով Նազիր շահի սպանութեանն (1747) յաջորդած քաոսից, սպանել է եղբօրը, կոտորել նրա ընտանիքը եւ իրեն հռչակել Վարանդայի մելիք: Ուշագրաւ է այս եղբայրասպանութեան Բաֆֆու մեկնաբանութիւնը. «Մելիք-Յովսէփը եւ Մելիք-Շահնազարը խորք եղբայրներ էին, բացայայտում է նա, -Յովսէփը ծնուած էր Մելիք-Հուսէյնի Աննա-խաթուն անունով կնոջից, որը Տիգրակի իշխան Մելիք-Աւանի քոյրն էր, իսկ Մելիք-Շահնազարը ծնուած էր Զոհրա-խանումից, որը Նախիջեւանի խանի աղջիկն էր, ազգով թուրք: Մելիք-Հուսէյնը նրան իբրեւ գերի բերեց Նախիջեւանից, յետոյ ամուսնացաւ նրա հետ»³³: Անդթօրէն սպանուած Մելիք-Յովսէփը խաչէն գաւառի տիրակալ Հասան-Ջալալեաններէ տան փեսան էր եւ վերոյիշեալ արիւնհանգեղութիւնից մազապուրծ եղած նրա փոքրահասակ որդին՝ Սայր-բեկը, ապաստանել էր այնտեղ, իր քեռի Մելիք-Ալլահվերդու մօտ: Սակայն շուտով սարջալիներէ ցեղապետ Փանահ Ալիի (մահ.1762) հետ դաշնակցած Մելիք-Շահնազարի եղբայրասպան ձեռքը հասաւ նաեւ նրան:

Ենթադրում ենք, որ Մելիք-Հուսէյնի որդին եւ Մելիք-Շահնազար Բ-ի եղբայրն էր նաեւ ոմն Ղահրաման բեկ: Նման ենթադրութեան համար հիմք է ծառայել Աւետարանոցի Մելիք-Շահնազարեանների տոհմական հանգստարանում գտնուող մի տապանաքար, որը կրում է սոյն արձանագրութիւնը.

«Այս է տապան մելիք Սէյիմի որդի
Ղահրիման բեկին, Թվ(ին) ՌՄԷ (1758)»:

Միաժամանակ նշենք, որ Ղահրաման բեկի անուան հետ կապուած որեւէ յիշարժան դէպք մեզ յայտնի չէ:

Շահնազարի մելիքական իշխանութիւնը 1748թ. հաստատուել է Իրանի Ալի Իբրահիմ շահի հրովարտակով: Մեզ է հասել այդ շահական հրովարտակի ԺԹ. դարում կազմուած պատճէնը, որի թարգմանութիւնը ներկայացնում ենք ստորեւ.

³² Мирза Адигезаль-бек, Карабаг-наме, Баку, 1950, с. 55.

³³ ԲԱՖԲԻ, նշ. աշխ., էջ 452:

«Աշխարհասաստ հրամանագիր հրապարակուեց հետեւեալի մասին.

Բրիտոնեաներից լաւագոյն Վարանդայի մելիք Շահնագարի հանդէպ ունեցած շահական ողորմածութեամբ, վիշապի տարուայ երրորդ ամսուայ սկզբից նրան նշանակում ենք տարեկան 50 Թաւրիզի թուման ռոնիկ եւ նրան յանձնում Վարանդա մահալի մելիքութիւնը, որպէսզի նա ամէն տարի իր ռոնիկը ստանայ այնտեղ դիւանի մալիյաթի գումարից եւ ծախսի իր կարիքների համար՝ ճշտօրէն ու շիտակ կերպով ծառայելով եւ անհրաժեշտ ջանքերը գործադրելով այդ վիլայեթը շէնացնելու, ուսյաթներին հաւաքելու, դիւանի հարկերն ու այլ պարտաւորութիւնները կատարելու գործում, այնպէս որ նրա բարեացակամութիւնն ու հաւատարմութիւնը աշխարհակալ տիրոջը [շահին] յայտնի դարձնի: Վարանդա մահալի ուսյաթները պէտք է վերոյիշեալին այդ մահալի մելիք ֆանաչէն ու այդ գործի պարտականութիւնները նրան վերապահեն: Բարձրագոյն դիւանի մեծ մուսթովֆիները այս արձայական ռադամ-հրամանագիրը թող գրանցեն եւ այն իրենց պարտականութիւնը համարեն: Գրուեց 1161թ. զի հեջջէ ամսին (1748թ. նոյեմբերի 22-ից դեկտեմբերի 22-ը)»³⁴:

Մելիք-Շահնագարի տմարդի արարքը նրա դէմ է հանում Արցախի միւս մելիքներին: Սկսւում է եղբայրասպան պատերազմը: «Մելիք Շահնագարը զգալով իր տկարութիւնը մելիքների հանդէպ՝ անհամագստացած սկսում է ելք որոնել,-գրում է Միրզա Եուսուֆ Ներսէսովը,- նարահատեալ դիմում է Փանահ խանի օգնութեանը, նրան հպատակւում եւ հաւատարմութեան երդում է տալիս եւ նրա աջակցութեամբ ազատւում մելիքների պատժից: Մելիք Շահնագարը լինելով շատ հարուստ՝ Ղարաբաղի խաներին ծառայութիւններ է մատուցում, որի շնորհիւ մեծ պատուի է արժանանում: Փանահ խանի իշխանութեան սկզբնական շրջանում, երբ նա փողի կարիք էր զգում, Մելիք Շահնագարը անհրաժեշտութեան դէպքում օգնութեան էր հասնում եւ նրա կարիքները բաւարարում: Վերջում Մելիք Շահնագարը իր գործերը բարելաւելու եւ դիրքերն ամրապնդելու համար, աղջկան՝ Հուրգադ խանումին, կնութեան է տա-

³⁴ Մատենադարան, Կաթողիկոսական դիւան, Թղթ. 2բ, վաւ. 203, պատճէն՝ Վաւերագրի հակառակ կողմում ռուսերէնով մակագրուած է. «копия грамоты Ибрахим Шаха персидского» (Թարգմ.՝ Ք. Կոստիկեանի):

լիս իբրահիմ խանին (*Փանահի որդուն - Ա. Մ.*), եւ այդ կերպ նրա հետ բարեկամական կապեր հաստատում: Ասում են, մի անգամ, դեռ Փանահ խանի իշխանութեան սկզբում Մելիք Շահնագարը նրան ասում է. «Ինչո՞ւ ես մտառուում, եօթ տարի է, քո բանակը ընտիր աշորայով եմ պահում»³⁵:

Այդ շրջանում Արցախում տեղի ունեցած իրադարձութիւնները ներկայացնում է նաեւ Յովսէփ արքեպիսկոպոս Արղութեանը, որը 1780-ին հերթականութեամբ ներկայացնելով *Նամսայի մելիքներին, Վարանդայի Մելիք-Շահնագարի մասին գրում է. «Զօրացուցիչն է տանկաց եւ միաբան ընդ խանին. ունի կարողութիւն եւ սա հազար արանց պատերազմողաց. Վարանդ»*³⁶: *Իսկ ահա Յ. Արղութեանի կողմից 1783թ. յունուարի 28-ին գրուած եւ գեներալ Պաւել Պոտյոմկինին ուղղուած նամակում կարդում ենք. «Մելիք Ադամի, մելիք Յովսէփի եւ մելիք Շաալու խորհուրդն մի էր, բայց ի մէջ նոցա որպէս թէ խորոցէր մելիք Շահնագարն, որ է այր խորամանկ, թերահաւատ եւ ամենայն գործս բարեաց անպիտան, նենգաւոր եւ դաւաճանող եղբարց: Ի Ղարաբաղ գայր էլ ինչ, որպէս յերկրիս նոյայիքն խորամաշրջիկ, որք կոչիր Զվանշիր, որոյ գլխաւորի անունն էր Փանայ խան: Խորամանկն ի չարիս մելիք Շահնագարն զնա կոչեալ ի յօգնութիւն իւր, կամաւ իւրով հնազանդեցաւ նմա եւ գրեթե իւր ետ նմա»*³⁷: *Հնդկահայ ականջալուր-ժամանակակիցները Մելիք-Շահնագարին բնութագրել են այսպէս. «Հնարամիտ անձնաւորութիւն է, հմուտ դիւանագիտական օրէնքներին ու ծէսերին: Սա եւս պարսից իշխանութեանն է ենթարկւում. առանց պարսիկ իշխանի (Փանահի-Ա. Մ.), որը սրան իրեն է հպատակեցրել, որեւէ բան, ինչ էլ որ կամենայ, չի կարող անկախաբար կատարել»*³⁸: *Իսկ ահա այդ իրողութեան արձագանքները ԺԹ. դարի կէսերի հայկական մամուլում. «Շահնագար՝ Վարանդայի մելիքը, Զարաբերդի Մելիք Ադամին եւ Գիւլիստանի Մելիք Յովսէփին մէջ եղած դաշնակցութենից վայելեալով, ինքն էլ Փանահ խանին հետ մի բարեկամութիւն արաւ,*

³⁵ ՄԻՐԱՍ. ԵՈՒՍՈՒՖ ՆԵՐՍԷՍՈՎ, *Եջ. աշխ.*, էջ 42, 50.

³⁶ ԼԷՕ, Հայոց պատմութիւն, հ. 3, էջ 832, *Армяно-русские отношения в XVIII веке, т. IV, Ереван, 1990, с. 153.*

³⁷ ԳԵՈՐԳԵԱՆ Պ., Յովսէփ արք. Արղութեանի երկու նամակ-գեղուցագրերը որպէս հայ ժողովրդի պատմութեան սկզբնաղբիւրներ, *«Էջմիածին»*, 1962, *թիւ 4*, էջ 37, *Армяно-русские отношения в XVIII веке, т. IV, с. 212.*

³⁸ Նոր տետրակ, որ կոչւում է յորդորակ, *Երեւան*, 1991, էջ 103.

նրան իր քնակատեղին Շուշուայ քերդը եւ իր աղջիկն էլ (Փանահի որդուն-Ա. Մ.) կնութեան տուաւ»³⁹: Փաստօրէն, այդ եղբայրասպան պատերազմում հայ մելիքներից յաղթողներ եւ պարտուողներ չեղան, այլ օգուտ քաղեց երրորդ, օտար կողմը՝ վաչկատուն սարջալիիների ցեղապետ Փանահ խանը, որը Մելիք-Շահնազարի թողոտուութեան շնորհիւ 1752-ին հաստատուեց Արցախի սրտում:

Կեանքի մայրամուտին Մելիք-Շահնազարը զղջում է իր գործած չարիքների համար եւ, որպէս մեղքերի թողուլիւն, վճռում վերանորոգել Ամարասը: Ս. Զալալեանցը այդ մասին գրում է. «Ձայս եկեղեցի շրջապատեաց սեմեկազարդ պարսպաւ ի նորումս Մելիք Շահնազար»⁴⁰: «Ճոաֆաղ» հանդէսում առաւել հանգամանօրէն են ներկայացուած Ամարասի վերանորոգման աշխատանքները. «Մելիք Շահնազար Հայկազն՝ իշխան գաւառակին վարանդու՝ կամելով ի հիմանց նորոգ շինել զայս ուխտատեղի, եւ հաստատել միաքանս ի նմա, կանգնեաց յապահովութիւն ի վերջ 18 դարու նախ առաջին ամրոց քառակուսի զեկեղեցեան՝ չորիւք աշտարակօք քարուկիրս եւ ամրակուս, եւ ի ներքս պարսպին շուրջանակի սեղանատունս, խոհանոցս, սեմեկս եւ այլ շինութիւնս ի պետս եւ ի քնակութիւն միաքանից, որք եւ ցարդ ամբողջութեամբ մնան: Այլ յաւարտիլ շինութեան քերդին՝ աւարտ եհաս եւ արեւու նորին՝ չեղեալ ձեռնհաս ի շինութիւն եկեղեցւոյն»⁴¹:

Պէտք է նշել, որ Վարանդայի տիրակալը չափազանց հարուստ անձնաւորութիւն էր եւ «Ամարասի վանքը շինելու, իր կալուածներում ջրանցքներ տանելու եւ այլ տնտեսական շինութիւնների վրայ մելիք Շահնազարը ծախսել է առնուազն 80 հազար ռուբլի արծաթ: Միայն տուգանքների արդիւնքը տալիս էր Շահնազարին 20 հազար ռուբլի, իսկ «միջի» (ձրի աշխատանքով կատարուած) վարուցանքը եւ հունձը, որ անում էին մելիքի համար,-30 հազար ռուբլի: Խմիչքների հարկերի կապալը (Շուշի բերդում) տալիս էր մելիք Զումշուդին (մելիք Շահնազարի որդուն) 7000 ռուբլի»⁴²:

³⁹ «Կոռնկ Հայոց աշխարհին», 1863, թիւ Ը, էջ 622.

⁴⁰ ԶԱԼԱԼԵԱՆՑ Ա., նշ. աշխ., հ. Ա, Տփլիս, 1842, էջ 196.

⁴¹ «Ճոաֆաղ», Մոսքուա, 1859, տետր Ժ, էջ 339.

⁴² ԼԵՕ, Հայոց պատմութիւն, հ. 3, էջ 506, նոյնի խոջայական կապիտալ, Երեւան, 1934, էջ 168.

Մելիք-Շահնազարը վախճանուել է 1792 թուականին, տարեց հասակում: Պահպանուել է Ամարասի Խորայէլ կաթողիկոսի ձեռքով գրուած յոյժ հետաքրքրական մի վկայութիւն, որտեղ բարբառային լեզուով ներկայացուած են Մելիք-Շահնազար Բ-ի վերջին օրերը եւ ժառանգական վէճերը նրա որդիների միջեւ: Վաւերագրում մասնաւորապէս կարգում ենք. «Ի ՌՄԽԱ (1792) ԹՎԻՆ Հայոց որ Մելիք Շահնազարն մին ազար գտաւ լաւ էր Թէ խանին մօտն, Թէ՛ յուրյան բանին, Թէ՛ յուրյան սառըղին վերահասու լինելն, ամենայն բանի եւ գործի մուղայաթ էր՝ Թէ չէ խելփցն ընկել էր, եւ ինքն բանի տեղեակ մարդ էր եւ իմաստուն: Ջոււշուտն մեծ որդին էր, նորանից վերն Հուսէինն էր, առաջ Ջոււշուտին հրաւիրեց Թէ՛ որդի, եւ ծերացել եմ, քիչ մի ազար էլ ունիմ, դու ինքդ էլ իմ մեծ որդին ես, ե՛կ իմ էլածն, Թէ նաղդ, Թէ վեշ, Թէ հայվանաթ, Թէ մյուլք քեզ հիպա անեմ (յանձնեմ) քանի որ խելքս գլխիս է. քանի որ ասեց՝ Ջոււշուտն յանձն չառաւ՝ Թէ լալա, եւ քու ապրանքին քամահ չունեմ, եւ էնչափ ունեմ, որ ինձ հերիք է: Սրանից ետն Հուսէյնին կանչեց մօտն, եւ քափիպս էսպէս էլ Հուսէյնին արաւ, սա էլ յանձն չառաւ: Սրանից ետն Ջեանկիրին՝ Թէ որդի, եւ քանի կենդանի եմ, եկ իմ ապրանքս քեզ հիպա անեմ. եւ Ջեանկիրն էլ չի յանձն առաւ: Նորանից Ջեանպախշն կոչեց մօտն՝ ասաց, որդի ես եւ Խամսունա մին մարդ եմ, ինձ աշխարհքս գիտեն, կարում չեմ, որ ես եւ դովլաթս (հարստութիւնս) կառավարեմ, շատ է, եւ էլ մենակ եմ, եկ եւ քեզ հիպա անեմ, եւ տունս եւ դովլաթս դու յո՛ւ տար, եւ Ջեանպախշն յանձն չառաւ. ետն Մելիք Շահնազարն շատ նեղացաւ... Ջատկէն մինչեւ վարդապառն անցաւ, Մելիք Շահնազարի ազարն օր աւուր աւելացաւ եկաւ էն տեղն հասաւ, որ գ [3] հափիմ կար, վերէն ձեռք քաշեցին, աշկարա (բացալալտ) ասեցին Թէ՛ մենք էլ եդ մարդիդ իլան չի կարացիմք անել էսօր եւ վաղն կը մեռնի... Մելիք Շահնազարն գ [3] օրէն ետ մեռաւ»⁴³:

Նրա մարմինն ամփոփուել է Մելիք-Շահնազարեանների տոհմական գերեզմանատանը, իսկ շիրմաքարը կրել է հետեւեալ չափածոյ արձանագրութիւնը.

«Այս է տապան Մելիք Շահնազարին,

⁴³ ԼէՕ, Հայոց պատմութիւն, հ. 3, էջ 869-871, հմմտ. ԲԱՐԽՈՒՏԱՐԵԱՆՑ Մ., Պատմութիւն Աղուանից, հ. Բ, էջ 121, տե՛ս նաեւ ԹՕԺՃԵԱՆ Յ., Ցուցակ ժողովածուաց Խ. վրդ. Դադեանի, հ. Բ, Վաղարշապատ, 1900, էջ 42.

Որ է որդի Մելիք Յիսէիմին,
Արցախ գաւառաց իշխանին,
Վարանդու տիրապետողին.
Սա էր հայր Մելիք Զիւմշիտին,
Ըստ ոռւսաց պլկովնիկին,
Ազնիւ ոմն Հայոց ազգին,
Արի եւ քաջ զօրավարին
Խնդրեմ առնել զայս արժանին
Միոյ բերան Հայր մեղային
ՌՄԽ. Բփին (1792)»⁴⁴:

Մելիք-Շահնազարը ամուսնացել էր երեք անգամ: Նրա առաջին, օրինաւոր կինը՝ Թաջումը (Թագուհի), որն ըստ Բաֆֆու խաչէն գաւառի տիրակալ Հասան-Ջալալեանների տնից էր⁴⁵, վախճանուել է 1751թ., ինչպէս վկայում է նրա տապանաքարի սոյն արձանագրութիւնը.

«Այս է տապան մելիքին
Շահնազարին կողակից
Թաճումին, Բփին ՌՄ (1751)»:

Այս Թաջումը Մելիք-Ջումշուդի եւ Ամարնանի (Գիւլիստանի Մելիք-Բեգլար Բ-ի կինը) մայրն էր եւ նրա մահուան թուականը մօտաւոր պատկերացումներ է տալիս նաեւ Մելիք-Ջումշուդի ծննդեան թուականի մասին: Բաֆֆին Մելիք-Շահնազարի ընտանիքը ներկայացնում է այսպէս. «Մելիք-Շահնազարը ունէր մի քանի կնիկներ, Թագուհի-խանումից ծնունց Մելիք-Ջումշուդը, Սոնա-խանումից (Դիզակի Մելիք-Եսայու դուստրը-Ա. Մ.) ծնունց Մելիք-Հուսէյն Գ. եւ մի աղջիկ՝ Հուրի-զատ անունով, որին հայրը կնութեան տունց Իբրահիմ-խանին, իսկ Մալայիկ-խանումից ծնունց Ջիւսեփախը, Ջիւսեփիքը եւ մի աղջիկ Հումայի անունով»⁴⁶: Բաֆֆու տողերի իսկութիւնը հաստատուում է Բաղդասար մետրոպոլիտի 1849թ. հոկտեմբերի 18-ի մի գրութեամբ՝ Արցախի մելիքների կանանց եւ որդիների մասին հաւաստի տեղեկութիւններով, որտեղ Մելիք-Շահնազարի ընտանիքի մասին ասուում է հետեւեալը. «Վարանդու Մելիք Շահնա-

⁴⁴ ԲԱՐՍՈՒՏԱՐԵԱՆՑ Մ., Աղուանից երկիր եւ դրացիք: Արցախ, էջ 210, ԼԱՆԱՅԵԱՆ Ե., Երկեր Հ. 2, էջ 38-39, Դիւան, V, Արցախ, էջ 150.

⁴⁵ ԲԱՅՅԵԻ, ՆԶ. աշխ., էջ 452.

⁴⁶ Նոյն տեղում, էջ 499.

գարն ունէր ինքեան գառաջին օրինաւոր կին Թաջում անուն, յորմէ եւ ծնեալ է օրինաւոր որդի նորա Մելիք-Ջիւմշիւդն: Ջկնի մահուան յիշեալ Թաջումին, Մելիք-Շահնազարն էառ առ ինքն ի կենդանի առնէ զկինն Սօնայ եւ ընդդէմ օրինաց պսակեցաւ ընդ մմա, յորմէ եւ ծնեալ է որդի նորա Մելիք-Հիւսէինն, որոյ եւ ժառանգքն գտանին այժմ յԱւետարանոց գեղջ: Ի կենդանութեան նոյն Սօնայ ապօրինաւոր կնոջն Մելիք-Շահնազարն կրիւք բոլորսն օրինութեան ամուսնացաւ ընդ օրիորդին Մալակայ, դստեր հարազատ եղբոր հանգուցեալ կնոջն իւրոյ Թաջումի, եւ յայսմ ապօրէն ամուսնութենէ ծնեալ են Ջահանբախշն եւ Ջահանկիրն, որոց ժառանգք եւս գտանին յԱւետարանոց: Այլ չունի նա զհարմորդի ժառանգս»⁴⁷: *Որպէս ասուածի շարունակութիւն նշենք, որ պահպանուել է Ռուսաց կայսեր հրամանագիրը՝ Մելիք-Շահնազարի ապօրինի կապերից ծնուած որդիներին օրինաւոր ժառանգ չճանաչելու վերաբերեալ, որտեղ գրուած է. «Յիշեալ Մելիք-Շահնազարն ըստ ամենայնի ապօրինապէս է պսակեալ ընդ Սօնայ եւ Մալակ անուանեալ կանանց, ուստի ծնեալին յայտոցիկ կանանց ըստ զօրութեան եկեղեցական եւ քաղաքական օրինաց ո՛չ կարին համարել օրինաւոր ժառանգք յիշեալ Մելիք-Շահնազարի»⁴⁸: Ի հարկէ, Մելիք-Շահնազարի երկրորդ եւ երրորդ ամուսնութիւններէ, կամ ինչպէս ժողովրդի դիտակցութեան մէջ է արմատացած՝ ապօրինի կապերից ծնուած լինելու հանգամանքը ամենեւին էլ չի խանգարել, որ նրա այդ գաւակները եւս բաժին ստանան իրենց հօր ունեցուածքից եւ անգամ ունենան Վարանդայի մելիք դառնալու յաւակնութիւններ: Այսպէս, Երեւանի Մատենադարանի Կաթողիկոսական դիւանում պահպանուում է 12074. թ. ռամազան ամսին (1793թ. ապրիլի 12-ից մայիսի 12-ը) կազմուած մի արձանագրութեան պատճէն, ըստ որի Մելիք-Շահնազարի որդիներ Ջահանբախշն ու Ջահանգիրը իրար մէջ բաժանում են իրենց հայրական ունեցուածքը, որոնցից առաջինին բաժին է ընկնում Ամարաս*

⁴⁷ Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ, էջ 180, տե՛ս նաեւ Մատենադարան, ձեռ. 7429, էջ 9, որտեղ կարդում ենք. «Մելիք Շահնազարն ունեցաւ 3 կին. առաջին քսկած կնկանից ծնաւ Մելիք Ջիւմշուդն. երկրորդ խանից Հուսէյինն, երրորդ քսկովէց ծնաւ Մելիք Ջահանբախշն, Ջահանգիր աղան»:

⁴⁸ Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ, էջ 123, ՄԱՂԱՆԵԱՆ Ա., Հայաստանեայց Առաքելական եկեղեցու պատմութիւնը արխիւային վաւերագրերում, «Դր շափ», 2002, թիւ 3, էջ 93. օ

(Աղ Օղլան) գիւղում գտնուող այգին տան հետ, նաեւ Չանախչի գիւղում գտնուող այգին եւ հնձանը, իսկ Ջհանգիր բէկին՝ Բեքիջանում գտնուող այգին ու 30 Թավրիզի թուման գումարը⁴⁹։ Իսկ Հուսէյնը, որի քոյր Հուրիգատ խանումը Շուշուայ Իբրահիմ խանի կինն էր, վերջինիս աջակցութեամբ ցանկացել է դառնալ Վարանդայի մելիք։ Այնուամենայնիւ, Մելիք-Շահնազարի աւագ որդի Մելիք-Ջումշուդին (մահ. 1812) յաջողուել է տիրանալ գաւառի իշխանութեանը։ Այդ մասին Մ. Բարխուտարեանցը գրում է. «Սպանում է Յիւսէիմն Մելիք-Ջիւմշիւտից. որ եւ յաջորդում է իւր հօր Մելիք-Շահնազար Բ-ին»⁵⁰, սակայն աղբիւր չի նշում։ Մելիք-Հուսէյնը մահացել կամ սպանուել է 1801-ին։ Նրա տապանաքարին, որը գտնուել է Մելիք-Շահնազարեանների տոհմական հանգստարանում, փորագրուած է եղել.

«Այս է տապան Մելիք Շահնազարի որդի Մելիք Յիւսէյիմին. Թվին ՌՄԾ (1801) էր»։

Մելիք-Հուսէյնի որդիները եւս վաղ են մահացել, ինչպէս վկայում են նրանց տապանաքարերի արձանագրութիւնները.

«Այս է տապան Մելիք Յիւսէյիմի որդի Մանասան Բեկին. Թվին ՌՄԾԶ (1807)»։

«Այս է տապան Մելիք Յիւսէյիմի որդի... Աւաքանին, Թվին ՌՄՀԲ (1823)»⁵¹։

Մելիք-Ջումշուդն իշխանութեան է եկել իր հօր աջակցութեամբ կայացած Ղարաբաղի խանութեան դէմ անհաշտ պայքար մղելու վճռականութեամբ։

Իրանի շահ Աղա Մամադ խանը (ծն.1742-մահ.1797) 1797-ին երկրորդ անգամ է արչաւում Անդրկովկաս։ Շուշուայ Իբրահիմ խանը, երկիւղելով ներքինի շահի դատաստանից, ընտանիքով փախչում է Դաղստան իր աներ Օմար խանի մօտ։ «Իբրեւ լուաւ Աղա Մամադ շահն թէ փախեաւ ապստամբեալ խանն Իբրահիմ ի քաղաքէ Շուշույ՝ ել եւ եկն տիրեաց նմա առանց

⁴⁹ Մատեմադարան, Կաթողիկոսական դիւան, Թղթ. 2թ, վաւ. 240, Վաւերագրի հակառակ կողմում մակագրուած է. «Ջհանախչին Ջհանգիրին տուա եկած թարի տավան է»։

⁵⁰ ԲԱՐԽՈՒՏԱՐԵԱՆՑ Մ., Պատմութիւն Աղուանից, հ. Բ, էջ 45։

⁵¹ ԲԱՐԽՈՒՏԱՐԵԱՆՑ Մ., Աղուանից երկիր եւ դրացիք։ Արցախ, էջ 211, Դիւան, V, Արցախ, էջ 151։

քանի պատերազմի. եւ ետ ածել զառաջեալ զամենայն իշխանսն հայոց՝ եւ չարչարեալ զնոսա քաղմատեալ տանջամօֆ, զի զատոյգն ասացեն զորքանութենէ յընչից իւրեանց»⁵²: Իսկ «Ձերքակալութեան մէջ էին Վարանդայի Մելիք Շահնազարի որդի Մելիք Ջումշուդը, Մուլա Փանահ Վաղիֆը եւ շատ ուրիշ ազնուականներ ու իշխանաւորներ»⁵³: Մելիք Ջումշուդը Աղա Մամադէ խանին 70.000ռ. տուգանք տալով հազիւ է ազատում իր գլուխը⁵⁴ եւ, օգտուելով վերջինիս անակնկալ սպանութիւնից, նախքան Իբրահիմ խանի վերադարձը, իր քրոջ որդու Գիւլիստանի Մելիք-Յրեյդուլնի (1768-1808) հետ փախչում է Վրաստան: Այս դէպքերի մասին յիշատակութիւններ են թողել նաեւ իրենք՝ փախչողական մելիքները: Այսպէս, Մելիք-Ջումշուդի՝ 1798թ. դեկտեմբերի 23-ին գրուած եւ ռուսաց կայսր Պաւել Ա-ին ուղղուած խնդրագրում կարդում ենք. «Աղայ Մահմատ խանին մտեալ յամրոցն Շուշի՝ զմնացեալ ինչս իմ գթագուցեալս զգուշութեամբ, յափշտակեալ էառ յինէն, զկնի որոյ եւ ինքն ի նոյնում ամրոցի սպանեալ եղել, իսկ ես ըստ վերոյ գրելոցն երկուցեալ ի դառնալոյ Իրեքիմ խալիլ խանին, տեսնելով զյարմար դիպուած ի փրկել զիս, թողեալ գտունս, զգաւառս եւ զամենայն զհպատակս իմ, բռնադատեալ եղէ անտի որդով իմով Պօղոսի եւ Բեռարդուլն մելիք Փիքիդոնի եւ իւզբաշի Պեպրոս քեզին աստ ընդ իս եղելովքն հանդերձ մամանալու եւ կնաւս եւ այլովք գաւառոս գրեթէ մերկ փախչիլ առ յաղթագգեաց զօրքն ռուսաց, որ ի վիրս»⁵⁵: Ահա նաեւ Մելիք-Յրեյդուլն Մելիք-Բեգլարեանի վկայութիւնը. «Ի յարձակելն ի վերայ Ղարաբաղու Աղայ Մահմատ խանին, յորմէ եւ տանջողն՝ Իբրահիմ խալիլ խան, եղել բռնադատեալ փախչիլ առ լեզկին եւ ի մերկանալն ի մամնէ ըստ մնացեալ գոյից բարերարին իմոյ եւ գերապատուելի մօրեղբայր մելիք Ջիմշիտին եւ ի սպանանելն Աղայ Մահմատ խանին ի Ղարաբաղ ի յիւրոցն, ես յիշեալ մօրեղբայրքն իմով փախեալ անտի ի վիրս»⁵⁶: Մելիք-Ջումշուդի Արցախից հեռանալու մասին գրում է նաեւ Ամենայն Հայոց կաթողիկոս Դուկաս Ա. Կարնեցին հնդկահայ նշանաւոր գործիչ Շահամիր Շահամիրեանին հաս-

⁵² ԶԱՔԱՐԵԱՆ Թ., Պատմութիւն գաւառին Արցախու, Մատենադարան, ձեռ. 2734, էջ 18:

⁵³ ՄԻՐԶԱ ԵՈՒՍՈՒՅ ՆԵՐՍԵՍՈՎ, նշ. աշխ., էջ 74:

⁵⁴ Армяно-русские отношения в XVIII веке, т. IV, с. 461.

⁵⁵ Армяно-русские отношения в XVIII веке, т. IV, с. 494.

⁵⁶ Армяно-русские отношения в XVIII веке, т. IV, с. 491.

ցէագրուած նամակում. «Այլ յետ Գերբինոյ կործանմանն մելիք Ջումշուտն կասկածեալ յիբրաիմ խանէն, որ դառնալոց էր ի Կովկասու, ամենայն տամբն խոյս ետ ի Տփլիս»⁵⁷: Պէտք է նշել, որ մելիքների հեռանալը հայրենիքից խարխլեց խամսայի մելիքութիւնների հիմքերը եւ, ընդհակառակն, ամրապնդեց Իբրահիմ խանի դիրքերը Արցախում:

1797-1798 թթ. Արցախում սով է սկսւում, որին յաջորդում է ժանտախտը: Քաղցից եւ համաճարակից փրկուելու նպատակով մելիքների հպատակները, «գլխաւորապէս Գիւլիստան եւ Վարանդա գաւառների ժողովուրդը»⁵⁸, եւս գաղթում են Վրաստան:

Այնտեղ սովատանջ հայ ազգաբնակչութեանը վատ են ընդունում: Վրաց ազնուականութիւնից յուսախաբ 1799թ. «Մելիք-Բեգլարեան Մելիք-Ֆրեյդունը եւ Մելիք-Շահնազարեան Մելիք-Ջումշուդը գնացին Ս. Պետերբուրգ անձամբ աղերսամատոյց լինելու կայսրի մօտ իրենց պահանջների մասին»⁵⁹: Պաւել Ա-ի 1799թ. յունիսի 2-ի հրովարտակի համաձայն Գիւլիստանի Մելիք-Աբովին է տրւում Բոլնիսի գաւառը, Մելիք-Ֆրեյդունին՝ Աղջակալան եւ Բորչալուի մի մասը, իսկ Բորչալուի մնացած մասը եւ Լոռին վրաց Գէորգի ԺԲ. Թագաւորի (1798-1800) հրամանով տրւում է Մելիք-Ջումշուդին⁶⁰: Բացի այդ, կայսրը դեսպանորդ մելիքներին պարգեւատրում է գերազանցութեան շքանշաններով եւ մշտական թոշակ նշանակում: Մելիք-Ջումշուդին տարեկան 1400ռ., Մելիք-Ֆրեյդունին՝ 1000ռ., իսկ Մելիք-Ջումշուդի որդի Մելիք-Պօղոսին՝ 600 ռ.⁶¹:

Սակայն Արցախի մելիքների դերը Վրաստանում, յատկապէս վրաց Գէորգի ԺԲ. Թագաւորի մահից (1800թ. դեկտեմբերի 28-ին) եւ Ռուսաստանի հետ Վրաստանի միաւորումից յետոյ, բաւականին ընկնում է: Այդ իսկ պատճառով մելիքները եւ նրանց հպատակները սկսում են վերադառնալ Արցախ: Մելիքներ-

⁵⁷ Հայկական աղբիւրները Աղա Մահամադ խանի անդրկովկասեան արշաւանքների մասին (1795-1797 թթ.), աշխ.՝ Ռ. ՏԻՏԱՆԵԱՆԻ, Երեւան, 1981, էջ 97, Այս դրքի մասին տե՛ս Պ. ՉՈՒԱՆԵԱՆԻ գրախօսութիւնը, «Լրաբեր հաս. գիտ.», 1982, թիւ 6, էջ 99-102:

⁵⁸ ՐԱՖԻՅԻ, նշ. աշխ., էջ 533:

⁵⁹ Նոյն տեղում, էջ 533-534:

⁶⁰ Акты Кавказской Археографической Комиссии, т. I, Тифлис, 1866, с. 637.

⁶¹ АКАК, т. II, Тифлис, 1868, с. 1149, "Кавказская старина", 1872, N 2, с. 35.

ընդ առաջինը օրինակ է ծառայել Մելիք-Ջումշուդը, որը «1805թ. ծախել է Լոռին Վրաստանի լեռնային մասի կառավարիչ կոմս Մուսիմ-Պուշկինին 6000 ռուբլով եւ իւր հարազատների հետ վերադարձել Ղարաբաղ»⁶²:

Ուշագրաւ է այն փաստը, որ Մելիք-Ջումշուդն աջակցել է մայոր Լիսանեւիչին՝ պարսից բանակին միանալ փորձող իբրահիմ խանի ոչնչացման գործողութիւնն իրականացնելիս, որը տեղի է ունեցել 1806թ. մայիսի 8-ի գիշերը:

Մելիք-Ջումշուդը, ինչպէս վկայում է նրա տապանագիրը⁶⁴, վախճանուել է 1812թ. ապրիլի 25-ին, եւ թաղուել Մելիք-Շահնազարեանների տոհմական գերեզմանատանը:

Մելիք-Ջումշուդը թողել է երեք զաւակ՝ Մելիք-Պօղոս, որն ուղեկցում էր հօրը Ռուսաստանեան առաքելութեան ընթացքում, Բեհրամ-բեկ եւ Մարգարիտ: Վերջինիս անունը մի արծաթէ խաչի վրայ կարդացել է Մ. Բարխուտարեանցը. «ընծայեցաւ սուրբ խաչս Ղեւոնդեայ հայրապետին Մարգարիտ Մելիք Ջիւմշիւտեանց 1876 աւի»⁶⁵: Բեհրամ-բեկի անունը քանիցս յիշատակուում է եւ՝ արձանագրութիւններում, եւ՝ փաստաթղթերում: Այսպէս, Աղուանից Ս. Գրիգորիս կաթողիկոսի աջի վրայ Մ. Բարխուտարեանցը կարդացել է. «Նորոգեաց վերստին սուրբ աջս Գրիգորիսի Բէյրամ բէկ Մելիք Ջիւմշիւտեան Մելիք Շահնազարովն. ՌՄԿԱ (1812) էր»⁶⁶, իսկ Ներքին Թաղավարդի Ս. Աստուածածին եկեղեցու դռան ճակատակալ քարին՝ «Շինեցաւ եկեղեցիս յանուն Սրբոյ Աստուածածնին արդեամբ եւ ծախիւ ազնիւ Բէրամ աղայի որդւոյ պօկոպնիկ Մելիք Ջիւմշիւտեան Շահնազարեանց ի յիշտակ կենդանեաց եւ համայն ննջեցելոց իւրեանց ի Քրիստոս 1840 թ-վ.»⁶⁷: 1836թ. դեկտեմբերի 17-ին գրուած մի փաստաթղթում, որը կովկասեան հետեւագործի գեներալի միջնորդագիրն է ուղղուած ռազմական նախարարին նրան ռոճիկ նշանակելու խնդրանքով, կարդում ենք. «Մուսուլմանական գաւառների պ. կառավարիչը վկայում է ինձ Ղարաբաղի

⁶² ԼԱԼԱՅԵԱՆ Ե., Երկեր, հ. 3, Երեւան, 2004, էջ 113:

⁶³ Իբրահիմի սպանութեան մասին տե՛ս AKAK, m. III, Tuփուս, 1869, c. 334-335.

⁶⁴ ԲԱՐՄՈՒՏԱՐԵԱՆՑ Մ., Աղուանից երկիր եւ դրացիք: Արցախ, էջ 210-211, ԼԱԼԱՅԵԱՆ Ե., Երկեր, հ. 2, էջ 39, Դիւան, V, Արցախ, էջ 150:

⁶⁵ ԲԱՐՄՈՒՏԱՐԵԱՆՑ Մ., Աղուանից երկիր եւ դրացիք: Արցախ, էջ 208:

⁶⁶ Նոյն տեղում, էջ 233:

⁶⁷ Նոյն տեղում, էջ 206:

գաւառի երկու մահաւների կառավարիչ, այնտեղի բնակիչ պրապորշչիկ Բահրամ րեկ Շահնագարովի ջերմեռանդ եւ նախանձախնդիր ծառայութեան մասին, որը լինելով չունենոր եւ մահալ-մաիրի պաշտօնի դիմաց չստանալով գանձարանից ոչ մի ոռնիկ, իր անշահախնդրութեամբ եւ անբասիր վարքով մշտապէս արժանացել է տեղի ղեկավարների ուշադրութեանը եւ այդ միջոցով ձեռք բերել իր կողմից կառավարուող բնակիչների առանձնայատուկ յարգանքը, ինչպէս րեկերի դասի, այնպէս էլ միւսների շրջանում:

Ի նկատի ունենալով այդպիսի հաւաստումները պրապորշչիկ Բահրամ րեկ Շահնագարովի գերագանց եւ օգտակար ծառայութեան մասին, եւ որպէս նրան խրախուսում հետագայում եւս նմանապէս ծառայելու համար, պատիւ ունեւ խոնարհաբար խնդրել Ձերդ պայծառափայլութեանը՝ միջնորդելու Նորին Կայսերական Մեծութիւն Տէր Արքայից կարգադրութիւն ստանալու՝ նրան իր աստիճանի համեմատ ոռնիկ նշանակելու մասին, ըստ Վրաստանի բանակային հետեւագօրի դրոյքի, եւ ինչ կը հետեւի սոյն բարեհաճութեանը, ինձ կը պատուէ՛ք ծանուցումով: Ընդ որում պատիւ ունեւ աւելացնելու, որ Բահրամ րեկ Շահնագարովը պրապորշչիկի աստիճան ստացել է 1818 թուականին լեզգիների դէմ իրագործուած արշաւի համար»⁶⁸: *Ինչպէս երեւում է հետագայ վաւերագրերից⁶⁹, հարցը լուծուել է դրականօրէն: Պահպանուել է նաեւ Բէհրամ Շահնագարեանի 1843թ. Յուլիի 16-ի շնորհակալագիրը Կաթողիկոսին՝ իր որդի Միքայէլ-բեկի եւ Սոֆիա Մադաթեանի նշանադրութեան գործը յօգուտ նրանց՝ սինոդի որոշման համար*⁷⁰:

Մելիք-Ջումշուդին յաջորդած Մելիք-Խուդադադը (1793-1833) Վարանդա գաւառի վերջին տիրակալն էր: Փաստաթղթերը վկայում են, որ Մելիք-Խուդադադի իշխանութեան սկզբնական շրջանում Ղարաբաղի Մեհտի Ղուլի խանը՝ Իբրահիմ խանի որդին, փորձել է տեղի-անտեղի միջամտել նրա գործերին: Այսպէս, պահպանուել է Մեհտի Ղուլի խանի 1228 հ. թ. (1813) հրամանագիրը տրուած Մելիք-Խուդադադին, որտեղ նշում է, որ Մելիք-Ջահանբախին, որպէս մերձաւոր պաշտօնեայի, պէտք է յատկացնել 25 ընտանիք, որոնք նրա համար հողագործութեամբ կը

⁶⁸ Российский государственный военно-исторический архив (РГВИА), ф. 395, оп. 92, г. 154, л. 1.

⁶⁹ РГВИА, ф. 395, оп. 92, л. 154, л. 2-4.

⁷⁰ Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ, էջ 121-122,

զբաղուեն, որպէսզի նա իր կարիքները հոգայ⁷¹: Իսկ ահա գեն. Ռտիշչենի՝ Մեհտի Ղուլի խանին 1816թ. Յունուարի 20-ին ուղղուած նամակում այդ մասին կարդում ենք. «Ղարաբաղի Մելիք-Խուդադադ Շահնագարովը ինձ բողոք ներկայացրեց այն մասին, որ Ձերդ Գերագանցութիւնը նշանակել է Երա մօտ Հաջի բեկ անունով Ձեր պրիստաւին, որն իր իշխանութիւնը այն աստիճանի է տարածել, որ գրկել է նրան իր հպատակների նկատմամբ իշխանութեան իրաւունքից: Եւ պարտական լինելով տրքնել այս երկրամասը բնակեցնող բոլոր ազգերի բարեկեցութեան համար, իմ պարտքն եմ համարում առաջարկել Ձերդ Գերագանցութեանը, որպէսզի դուք այս ստանալուց յետոյ անյապաղ հետ կանչէք Ձեր մօտ նշանակուած Հաջի բեկին, Մելիք-Խուդադադին հնարաւորութիւն ընձեռելով ազատ եւ անկաշկանդ կառավարել իր հպատակներին, քանի որ նա պարտական է Ձեզ միայն պարտաւորութիւններով, տեղական սովորոյթի համաձայն, իսկ իր սեփականութեան կառավարման գործում ոչ մի կողմնակի անձ խռնուել չի կարող եւ պարտաւոր չէ, ռուսական կառավարման մէջ գոյութիւն ունեցող կարգի համաձայն: Այդ իսկ պատճառով հաղորդելով վերոգրեալը Ձեզ ի գիտութիւն, ես մնում եմ համոզուած, որ Ձերդ Գերագանցութիւնը որպէս ռուսահպատակ կը հետեւէ սոյն օգտակար կանոնին, ինչը եւ թոյլ չէ տայ խախտել Ձեր մօտ գտնուող ձրիակեր բեկերից եւ ոչ մէկին, այլապէս հակառակ դէպքում այս կարգի պահպանման համար ձեռք կ'առնուեն այլ միջոցներ»⁷²:

Մելիք-Խուդադադը կառավարել է Վարանդայում⁷³ մինչեւ իր մահը՝ 1833 թուականը: Նրա տապանաքարին, որը գտնուել է մելիքական հանգստարանում, փորագրուած է եղել.

«Մելիք Խուդաթ իշխող Վարանդայ
Թոռն ըստ մարմնոյ Մելիք Զիւմշիւտայ,
Այս նորա տապան յորում մարմնով կայ,
Կենդանի հոգւով միշտ եւ յարակայ,
Ամաց քառասնից ել սա յաշխարհէ

⁷¹ Մատենադարան, Կաթողիկոսական դիւան, թղթ. 2բ, վաւ. 252, պատճէն, Վաւերագրի Հակառակ կողմում մակագրուած է. «25 տան թաղան ի Խուտայ տայտէն»:

⁷² Մատենադարան, Ալ. Երիցեանի արխիւ, թղթ. 158, վաւ. 140^ա, պատճէն:

⁷³ Նրա մասին տե՛ս նաեւ AKAK, т. VII, Тифлис, 1878, с. 461-462.

Ջերծ արդ գտանի յամենայն չարե.
 Ջայս վեմ ետ շինել առն իւրում ի ձօն,
 Ի պատիւ սորա կին սորին զգօն.
 Թվ. ՌՄՁԲ (1833) էր»⁷⁴:

Լէոն եւ Բ. Ուլուբաբեանը սխալմամբ Մելիք-Խուզադադին համարել են Մելիք-Շահնազարի որդին⁷⁵, այնինչ, ինչպէս երեւում է նրա տապանագրից, նա Մելիք-Ջումշուդի թոռն է եւ ծնունդ է Մելիք-Շահնազարի մահից մէկ տարի անց՝ 1793 թուականին: Մելիք-Խուզադադի կինը իշխան Յովսէփ Բեհբու-թեանի դուստր Մարիան (1807-1837) էր⁷⁶:

Մելիք-Շահնազարի որդի Մելիք-Ջանբաշխը, որի մասին խօսք եղաւ վերելում մահացել էր 1822թ., ինչպէս վկայում է նրա սոյն տապանագիրը.

«Այս է տապան Մելիք Ջանբաշխին
 Իշխող վարանդայ գաւառին.
 Ազնիւ որդոյ Մելիք Շահնազարին
 Վախճանեցաւ 1822»⁷⁷:

Մեզ յայտնի տեղեկութիւնների համաձայն Մելիք-Ջանբաշխը թողել է երեք որդի՝ Խոսրով, Ադամ, Լալա՝ եւ մէկ դուստր՝ Նանագիւլ, որի անունը կարդում ենք մի աւետարանի յիշատակարանում. «Գրեցաւ ի 1845 ամի փետ. 18-ին. այս յիշատակ հայերէն աւետարանս տուեալ եղեւ ի գիւղն Խումիշինակ Սուրբ Աստուածածնայ եկեղեցւոյն որ է ընծայողն Չանադչու (Աւետարանոց) գիւղին բնակիչ Մելիք Ջանբաշխի որդի դուստր Նանակուլ Մելիք Շահնազարեանց եւ այլ մին սուրջառ (չուրջառ) իր արծաթի չափոստովն»⁷⁸: Մելիք-Ջանբաշխի

⁷⁴ ԲԱՐՈՒՏԱՐԵԱՆՑ Մ., Աղուանից երկիր եւ դրացիք: Արցախ, էջ 211, ԼԱԼԱՅԵԱՆ Ե., Երկեր, հ. 2, էջ 39, Դիւան, V, Արցախ, էջ 150:

⁷⁵ ԼէՕ, Խոջայական կապիտալ, էջ 163, ՈՒԼՈՒԲԱՐԵԱՆ Բ., Արցախի պատմութիւնը սկզբից մինչեւ մեր օրերը, էջ 183:

⁷⁶ Hews R., The Meliks of Eastern Armenia III, "Revue des Etudes Armeniennes", 1975-1976, t. XI, p. 243.

⁷⁷ ԲԱՐՈՒՏԱՐԵԱՆՑ Մ., Աղուանից երկիր եւ դրացիք: Արցախ, էջ 211, ԼԱԼԱՅԵԱՆ Ե., Երկեր, հ. 2, էջ 39, Դիւան, V, Արցախ, էջ 150:

⁷⁸ ՀԱԱ, ֆ. 57, ց. 3, գ. 2, թ. 3, 4, 19-20, 24-25:

⁷⁹ ԲԱՐՈՒՏԱՐԵԱՆՑ Մ., Աղուանից երկիր եւ դրացիք: Արցախ, էջ 222,

որդի Ադամն իր հերթին ունեցել է երեք որդի՝ Կարապետ, Ալեքսան եւ Թուման անուններով⁸⁰:

Վերջում հետաքրքիր է տեսնել, թէ ինչպէս են արտայայտուել Մելիք-Շահնազարեանների տան շառաւիղները Վարանդալում իրենց նախնիների տիրապետութեան մասին: Մասնաւորապէս, «Վասն ծագման Մելիք-Շահնազարեան տոհմին» ձեռագրում այդ մասին կարդում ենք. «Ղարաբաղու նահանգում Վարանդայ գաւառում մեր յիմ ժամանակներում ամենեւին մահմետական չի եղել, բացի միայն հայք եւ եղել տիրապետողներն»⁸¹: Իսկ Մելիք-Ջահնբաշխի որդի Խոսրովը իր եղբայր Լալային 1836թ. նոյեմբերի 24-ին ուղարկած նամակում գրում է. «Վարանդու մօղալն որ կայ, Խամսայի հինկ մէլիքին, մին մէլիքին հայրդնիցն այ, ինչպէս որ մեծի շայի Ապասի ժամանակիցն մինչի Փանայ Խանի, եւ Փանայ Խանի ժամանակիցն մինչ Երմօլովն Կուրեխտան կայուն, Վարանդու մէլիքութունն մէլիք Պաղուն ժառանկներին ծեռիցն ոչ դուրս էլ եկած, ոչ էլ ատաք էլ դուրս կայուն, ոչ էլ կարելի այ դուրս բերելին, պատճառ որ այսպէսի աստիճանն պարսից թափայորների փարմանների գօրութունովն տուած էլ որքոց գորթի իմ նախնիացն որպէս որ այիայ (ահա) ԲՅ (200) տարի աւել էլ, որ Վարանդայ ժողովուրթն ծառայում էն մէլիք Պաղուն ժառանկացն»⁸²:

1826-1828թթ. ռուս-պարսկական պատերազմից յետոյ Մելիք-Շահնազարեանների տան ներկայացուցիչները որպէս տոհմիկ ազնուականներ մտան ռուսական ծառայութեան մէջ⁸³:


⁸⁰ Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ, էջ 122-123:

⁸¹ Մատենադարան, ձեռ. 7429, էջ 9բ:

⁸² Մատենադարան, Կաթողիկոսական դիւան, թղթ. 257, վաւ. 167, թ. 1-2:

⁸³ Ցարական բանակում որպէս սպայ ծառայած Մելիք-Շահնազարեանների անունանցուցակը տե՛ս РГВИА, ф. 409, он. 1, л. 1. Սոյն արխիւի փաստաթղթերի պատճենները մեզ է տրամադրել Կ. Աթայեանը:

ՎԱՐԱՆԴԱ ԳԱԻԱՌԻ ՏԻՐԱԿԱԼ



Ծանոթագրութիւններ



- տղամարդ




- կին


* Մելիք-Հուսէինը ունեցել է 2 կին՝ Աննա խաթուն
եւ Զորա խանում անուններով:

** Մելիք-Շահնազար Բ-ը ունեցել է 3 կին՝ Թադուհի,
Սոնա եւ Մալայիկ անուններով:

ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՆԵՐԻ ՏՈՀՄԱԾԱՌԸ



ԿՈՒՍԱՊԱՏԻ ԱԹԱԲԵԿԵԱՆՆԵՐԻ



ԳԼՈՒԽ Ե.

ՋՐԱԲԵՐՂ ԳԱԻԱՌԻ ՎԵՐՋԻՆ

ՏԻՐԱԿԱԼ ԱԹԱԲԵԿԵԱՆՆԵՐԻ ՏՈՀՄԱԾԱՌԸ

Ջրաբերդ (Ջարապերթ, Ջարաբերդ) գաւառի մեկիջութեան տարածքը սկսւում էր Թարթառ գետից եւ տարածւում մինչեւ Խաչէն գետը: 18-րդ դարի սկզբից Ջրաբերդ գաւառի տիրակալներն էին Մելիք-Իսրայէլեանները, որոնցից էլ սերել են այս գաւառի վերջին տիրակալ Աթաբեկեանները⁸⁴:

Աթաբեկեանների գերդաստանը սկիզբ է առել Աթաբեկ իւզբաշուց (Հարիւրապետ), որը բնակւում էր Ջրաբերդ գաւառի Կոսապատ (Կսապատ) գիւղում: Նրա անունով էլ տոհմի անդամները սկսել են կոչուել Աթաբեկեաններ: Աթաբեկ իւզբաշուց մասին կցկտուր տեղեկութիւններ են պահպանուել: Յայտնի է, որ նա «իրեմից յետոյ թողել է երկու գաւակներ՝ Վանի եւ Գուլի: Հետագայում Վանու ժառանգները փոխադրուել են Ռուսաստան, ուր ապրում են մինչեւ օրս: Գուլիի ժառանգները մնացին Ղարաբաղում»⁸⁵:

Գուլիի թոռ Յարութիւնը (Թունի) ապրել է 18-րդ դարի վերջերին: Յարութիւնի երկու տղաները՝ Վանին (Յովհաննէս, 1766-1854) եւ Յակոբը (մահ. 1844), հայրենասէր, քաջ եւ նախաձեռնող անձնաւորութիւններ էին ու աչքի են ընկնել պարսից թագաժառանգ Աբբաս-Միրզայի (1783-1833) գլխաւորած բանակի դէմ արցախահայութեան մղած պայքարում: Վանին, որը իւզբաշի էր եւ ծառայում էր Ջրաբերդ գաւառի իշխանութեանը Շուշուայ իբրահիմ խանի (1762-1806) օգնութեամբ տիրացած Մելիք-Ալլահվերդեանների վերջին ժառանգ Մելիք-Րովշանի հեծելազօրում, մասնակցել է 1804-1813 թթ. ռուս-պարսկական պատերազմին եւ իր մատուցած բազմաթիւ ծառայութիւնների համար ռուսական կառավարութիւնից ստացել պրապորշչիկի աստիճան, ոսկէ մեդալ ու տարեկան 200 ռուբլի թոշակ: Եւ, քանի որ Ջրաբերդի հին տիրակալ Մելիք-Իսրայէլեանների ժառանգները տեղափոխուել էին Գանձակի գաւառ, իսկ Մելիք-Ալլահվերդեանները՝ Նուխի գաւառ, Վանի իւզբաշուն շնորհուեց մելիքի տիտ-

⁸⁴ ԲԱՐԽՈՒՏԱՐԵԱՆՑ Մ., Պատմութիւն Աղուանից, հ. Բ, էջ 56, Ա.Ի.ԳԵԱՆ Ս., Արցախը հայ մշակոյթի կարեւորագոյն օջախ, Երեւան, 1991, էջ 187:

⁸⁵ ՊՈՏՏՈՅ Վ., Ղարաբաղի առաջին կամաւորները, Երեւան, 1974, էջ 9:

ղոս ու նա 1813-ին ստացաւ Զրաբերդի մելիքութեան կառավարչի պաշտօնը⁸⁶: «1814թ. նրանց տրուած խանական քալաղից ի միջի այլոց յայտնի է դառնում, որ Վանին իր ջանքերով Զրաբերդի մահալում բնակեցնում է 7 հայկական գիւղեր, որտեղ պարսկական արշաւանմների ժամանակ բռնութիւն ոչնչացուել էին երկրամասում երբեմնի եղած քաղաքակրթութեան բոլոր հետքերը»⁸⁷:

1822թ. Մելիք-Վանու տանը հիւրընկալուած նշանաւոր գրող Մ. Թաղիադեանը նրա մասին գրում է. «Հասաք ի Ծիրանաք, գոր հասարակօրէն Մելիք Վանոյ գիւղ ասէին, ի գաւառին Խաչենոյ, եւ իջաք ի տան նորուն իսկ Մելիք Վանոյ, առն բարեպաշտի եւ երկիւղածի յԱստուծոյ, բայց եւ հօգօրին ի պատերազմի: Լոկ անուն սորա դողացուցանէր զշրջակայ ազգս, մինչեւ անգամ եւ զլեռնականս Կովկասու: Երկիր նորա առատ էր հացիւ եւ մեղերք. երկվարք նորա ընտիրք, եւ բնակիչք ամենայն Հայք հօգօրք եւ տիրասէրք յոյժ»⁸⁸:

Մելիք-Վանին 1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմի սկզբին պարսից բանակի հրամանատար Աբբաս-Միրզայի մօտ գնացած պատգամաւորներից մէկն էր: Այս առաքելութիւնից յետոյ նա եւ միւս պատգամաւորները՝ Ղարաբաղի մետրոպոլիտ Սարգիս արքեպիսկոպոս Հասան-Ջալալեանն ու Գիւլիստան գաւառի տիրակալ Մելիք-Յովսէփ Բ. Մելիք-Բեգլարեանը զօրավար Վալերիան Մադաթովի (Ռոստոմ Մադաթեան, 1782-1829) հրամանով ձերբակալուած են եւ ութ ամիս մնում Բաքուի բանտում (Սարգիս մետրոպոլիտը բանտարկուած էր Թիֆլիսում): Ի վերջոյ, Ռուսաստանի վաղեմի ախոյեանի հետ ընդհանուր լեզու գտած ու նրա բարկութիւնն ամոքած հայ երեւելիները անմեղ են ճանաչուած եւ, Սիբիր աքսորուելու փոխարէն, վերադառնում հայրենիք⁸⁹: Մելիք-Վանին 42 տարի շարունակ կառավարել է Զրաբերդ գաւառը եւ վախճանուել 1854-ին, տարեց հասակում: Նրա կիներ Կուսապատի քահանայի դուստր Վարդուհին (մահ.

⁸⁶ ԲԱՖԵԻ, Երկերի ժողովածու 12 հատորով, հ. 9, էջ 565.

⁸⁷ ՊՈՏՏՈՅ Վ., նշ. աշխ., էջ 38.

⁸⁸ ԹԱՂԻԱԴԵԱՆ Մ., Ճանապարհորդութիւն ի Հայս, «Գրական ժառանգութիւն» գրքում, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1975, էջ 163.

⁸⁹ ԼԱԼԱՅԵԱՆ Ե., Երկեր, հ. 2, էջ 240, ԼԵՕ, Երկերի ժողովածու, հ. 4, Երեւան, 1984, էջ 412.

1857) էր: Կոստապատի գերեզմանոցում պահպանուել են նրանց տապանաքարերը հետեւեալ արձանագրութիւններով.

«Աստ Թադեցաւ մեծ իշխանն
Ջրաքերդու նախկին մելիք Իվանի
Աթաբեկեանց 88 ամաց
հասակի վախճանեցաւ»⁹⁰:

Ահա նաեւ Վարդուհու տապանագիրը.

«Այս է կողակից մելիք Վանին
անուն սորա է Վարթի
1857 ամի»:

Մելիք-Վանին թողել է չորս զաւակ՝ Յովսէփ-բեկ, Սարգիս-բեկ, Աթաբեկ (Աղամ) եւ Միքայէլ-բեկ:

Ոսկերիչ Յարութիւնի կրտսեր որդին՝ Յակոբ իւզբաշին (Մելիք-Վանու եղբայրը) եւս հայրենանուէր գործիչ էր, ու աչքի է ընկել ռուս-պարսկական պատերազմների ժամանակ: Նրա կինը սեյդիշենցի Զաւահիր Սարումեանն էր: Վերջինիս տապանաքարին գրուած է.

«Այս է տապան Զաւրագին որ է
կողակից Յակոբին իւզբաշին մեծ
իշխան Աթաբեկեանց, 1883 թվին»:

Յակոբ իւզբաշին ունեցել է երեք որդի՝ Ասլան, Զալալ եւ Յարութիւն: Կոստապատի գերեզմանոցում պահպանուել են նաեւ վերջին երկուսի տապանաքարերը սոյն արձանագրութիւններով.

«Այս է դապան Զալալ բեկին
որդի էր Յակոբ եոզբաշին
թոռն մեծ իշխան Աթաբեկին,
սայ էր ամաց քսանմեկին,
չուեալ գնաց յերկրէ յերկրին
ՌՄՂԶ (1847) ամի ԺԵ (15) նոիսբերին»:

⁹⁰ Հայկական ճարտարապետութիւնն ուսումնասիրող կազմակերպութեան (RAA) նիւթեր, Ս. Կարապետեանի 1999թ. գրառումներից:

Իսկ Յարուլթին Աթաբեկեանի տապանաքարին կարդում ենք.

«Յայսմ տապանի ամփոփեալ
դնի բարեսէր մարմին
Յարուլթին քէկի, սա էր
եղբօր որդի մելիք
Իւանի Աթաբեկեանց
մեծ իշխանի, 1876»:

*Ջալալը եւ Յարուլթինը մահացել են անժառանգ⁹¹: Թե-
րեւս, այդ պատճառով է Բաֆֆին իր «Խամսայի մելիքուլթին-
ներ» երկում գրել. «Յակոբ-իւզբաշին ունէր մի որդի միայն՝
Ասլան-քէկը, դրանից ծնունցան՝ Ներսէս-քէկ, Մովսէս-քէկ եւ
Նիկոլա-քէկ»⁹²:*

*Մակար եպիսկոպոս Բարխուտարեանցը կապաղակ գաւառի
(այժմ՝ Ադրբեջանի Հանրապետութեան Գաբալայի շրջան) Սուլ-
թան-Նուսի գիւղի գերեզմանոցում տեսել, ընդօրինակել եւ իր
«Աղուանից երկիր եւ դրացիք» գրքում գետեղել է վերոյիշեալ
Ասլան-քէկի տապանագիրը. «Հիմ եկեղեցու հարաւային կող-
մում, հանգստարանի մէջ աչքի է ընկնում մի ուշագրաւ մա-
հարձան, որի ներքեւ ամփոփուած է Կուսապատցի բարեհաւ-
քաւ Մելիք-Վանու թոռն Ասլան-քէկի մարմինն: Մահարձանն
կրում է սոյն արձանագրութիւնը. «Այս է տապան բարեպաշ-
տօն Ասլան քէկի, որդւոյ Ղարաբաղայ Ջրաբերդցի Աթաբե-
կեանց Յակովբ-քէկի, որ յատիմանի կօլլեժսկիյ սէկրետարի
վախճանեցաւ ի 40 ամաց հասակի 1847 դէկ. 30-ին»: Հանգու-
ցեալս վարած է այս կողմերում դատաւորի պաշտօն. թէւ
վախճանուած է ինքն, սակայն դեռ կենդանի է իւր արդարա-
դատութեան հոչակն կենդանի ժողովրդեան յիշողութեան մէջ»⁹³:
Այստեղ Մ. Բարխուտարեանցը սխալմամբ Ասլան-քէկին համարել
է Մելիք-Վանու թոռը, մինչդեռ նա ոչ թէ Մելիք-Վանու թոռն
էր, այլ վերջինիս եղբայր Յակոբ իւզբաշու որդին:*

⁹¹ ՊՈՏՏՈՅ Վ., նշ. աշխ., էջ 58, ԲԱՐԽՈՒՏԱՐԵԱՆՑ Մ., Պատմութիւն Աղուանից, Հ. Ա, Վաղարշապատ, 1902, էջ 146, Հ. Բ, էջ 56, ԱՒԱԳԵԱՆ Ս., Արցախը հայ մշակոյթի կարեւորագոյն օջախ, էջ 188:

⁹² ՐԱՖԻԻ, նշ. աշխ., էջ 565-ի տողատակի ծանօթագրութիւնը:

⁹³ ԲԱՐԽՈՒՏԱՐԵԱՆՑ Մ., Աղուանից երկիր եւ դրացիք: Արցախ, էջ 125, Հմմտ.՝ Վ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ, Բուն Աղուանի հայերէն վիմագրերը, Երեւան, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» հրատ., 1997, էջ 46:

Աթաբեկեանները թողել են բազմաթիւ ժառանգներ, որոնց մի մասի շառաւիղները այսօր էլ բնակւում են Արցախում, իսկ ոմանք էլ բարձրագոյն կրթութիւն ստանալու եւ այլ նպատակներով անցել են Բաքու, Թիֆլիս, Երեւան եւ Էջմիածին, ինչպէս նաեւ Ռուսաստան, Պարսկաստան ու Եւրոպա: Այս տոհմի 95 շառաւիղների կէսից աւելին ունի բարձրագոյն եւ միջնակարգ մասնագիտական կրթութիւն:

Մելիք-Վանու որդիները՝ Յովսէփ-բեկը եւ Սարգիս-բեկը ապրում էին Կուսապատում: Պահպանուել է Արցախի թեմի առաջնորդ Բաղդասար արքեպ. Հասան-Ջալալեանի (1775-1854) 1852թ. ապրիլի 1-ի խնդրագիրը ուղղուած Ներսէս Ե. Աշտարակեցի կաթողիկոսին՝ Սարգիս-բեկ Աթաբեկեանին կոնսիստորիայի ատենադպիր նշանակելու վերաբերեալ, որտեղ մասնաւորապէս կարգում ենք. «Այժմ վերստին վստահամա՞ իմդրել ամենախոնարհաբար յԱստուածահաստատ Տէրութենէ Ձերմէ բարեհաճել նշանակել հաստատապէս ատենադպիր կոնսիստորիին գնախալիշատակեալ կուրերնսկի սեկրետար Սարգիս-բեկն, որդի Իվանէ-բեկին Աթաբեկեանց, որ ամօք բազմօք ծառայելով ի կոնսիստորիին Ղարապաղու եւ այժմ գտանելով առ ոտս Սրբութեան Ձերոյ, կարէ արժանապէս կատարումն տալ ամենայն պատուիրանաց եւ կարգադրութեանց եւ խրատուց, զորս ունիք բարեհաճել ցուցանել նմա եւ կամ գրել վասն գործառնութեանց եւ կառավարութեանց վիճակին»⁹⁴: Մելիք-Վանու որդի Աթաբեկը զնդապետ էր ու մասնակցել է 1853-1856թթ. Ղրիմի պատերազմին: Վերջինիս որդի Անդրէյը եւս եղել է բարձրաստիճան զինուորական (գեներալ-մայոր) ու վարել մի շարք պատասխանատու պաշտօններ: Մելիք-Վանու կրտսեր որդին՝ Միքայէլ-բեկը, մահացել է առանց ժառանգ թողնելու:

Կուսապատի գերեզմանոցում պահպանուել են նաեւ Յովսէփ-բեկի եւ Սարգիս-բեկի տապանաքարերը հետեւեալ արձանագրութիւններով.

«Տապանս է այս Յովսէփ բեկին
անդրանիկ որդոյ մելիք Վանին,
յազգէն մեծի Աթաբեկեանցին,

⁹⁴ Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ, էջ 215,

ծնաւ 1815 ամի յ8-ըն փետրվարին,
վախճանեցաւ 1861 ամի 14-ին սեպտեմբերին»:

Իսկ Սարգիս-բեկի շիրմաքարը կրում է հետեւեալ տապանագիրը.

«Այս է տապան կօլլեակի սաւետմիկ
Սարգիս բեկի որ է որդի մելիք
Վանին Աթաբեկեանց
վախճանեցաւ 1896 ամի
մայիսի 27-ին»:


Յովսէփ-բեկի որդիները՝ Ռուստամը, Յարութիւնը, Իսաջանը եւ Սարգիս-բեկի որդիները՝ Իվանը, Նիկոլայը, Ալեքսանդրը եւ Զումշուղը բնակւում էին Կոստապատում: Յովսէփ-բեկի որդի Ռուստամը եւ Սարգիս-բեկի որդի որդի Իվանը, ինչպէս երեւում է Կոստապատի հանգստարանում գտնուող նրանց տապանաքարերի արձանագրութիւններից, վաղ են մահացել: Հաւանաբար, այդ պատճառով ռուս ռազմական պատմաբան Վ. Պոտտոն (1836-1912) նրանց չի յիշատակում: Ահա Յովսէփ-բեկի որդի Ռուստամի տապանագիրը.

«Այս է տապան Ռուստամին,
որ է որդի Յովսէփ պեկին,
թոռն մելիք Յովհաննեսին,
որք եմ յազգէ Աթապեկին,
թվին ՌՄՁԳ (1834)»:

Ահա նաեւ Սարգիս-բեկի որդի Իվանի տապանագիրը.

«Այս է տապան Իվանին,
որ է որդի Սարգիս բեկին եւ
թոռն է մելիք Վանին
1858 վախճանեցաւ»:

Իսաջանի որդին՝ Գարեգինը (Մելիք-Վանու ծոռը, Յովսէփ-բեկի թոռը), ապրում էր Մարտակերտի շրջանի Մեհմանա գիւղում, որի բնակիչների մեծամասնութիւնը Աթաբեկեանների ազգականներն են: Գարեգինը վախճանուել է 108 տարեկանում, կրկնելով հօր երկարակեցութիւնը:



Ներսէս Ասլանի Աթաբեկեանի
տապանմարը

Յակոբ իւզբաշու ժառանգներէից շատերը եւս անուանի մարդիկ են դարձել: Այսպէս, Ներսէս Ասլանի Աթաբեկեանը (հարիւրապետի թուը, 1837-1904) հաշտարար դատաւոր էր Ղազարխում եւ «ցարական իշխանութեան հետ երկար ժամանակ դատ վարելուց յետոյ, որպէս հատուցում ցարական կառավարութեան կողմից Ղարաբաղում բռնագրաւուած իր հողամասի, ստանում է Փարաֆարի եւ Վարմազեարի (այժմ՝ Արեւաշատ) մէջ ընկած անջրդի եւ անմշակ քարքարոտ «դուեր» կոչուած պետական հողամասը: 1904թ. մայիսին Ներսէս Աթաբեկեանը, որը բազմաթիւ վկայութիւնների համաձայն մեծ հեղինակութիւն էր վայելում շրջակայ գիւղացիութեան մէջ եւ արժանացել էր նրանց համակրանքին, ինքնասպանութեամբ վերջ է տալիս իր կեանքին, թողնելով իր մահից յետոյ 40 հազար ուրլի պարտք»⁹⁵: Մենք ընդօրինակել ենք էջմիածնի Ս. Գա-

⁹⁵ ԵՂԻՍԱՅԱՐԵԱՆ Ս., Յովսէփ Աթաբեկեան, «ՊԲՀ», 1959, թիւ 2-3, էջ 207, 208; Նրա մասին տես նաեւ ԱԻԵՏԻՍԵԱՆ Վ., Հայ հասարակական մտքի զարգացման մարքս-լենինեան փուլի սկզբնաւորումը, Երեւան, 1976, էջ 246-255:

յիանէ վանքի բակում գտնուող նրա տապանաքարի արձանագրութիւնը.

«Երդուեալ հաւատարմատար
Ներսէս Ապամեան
Աթաբէկեանց
ծնեալ յ7 ապրիլի 1837 ա.
վախճան. ի 18 Մայիսի 1904 ա.»:

Նա թողել է վեց զաւակ՝ Մարիամ, Յովսէփ, Տիգրան, Միքայէլ, Դաւիթ եւ Ասլան:

Ներսէս-բեկի եղբայրները՝ Մովսէս-բեկը եւ Նիկողայ-բեկը պետական խորհրդականներ էին: «Նիկողայը մեռաւ պետական խորհրդատուի աստիճանով, զբաղեցնելով Ելիզաւետպոլի (Գանձակ-Ա. Մ.) ցահանգայիմ դատարանի յատուկ գործերի քննիչի պաշտօնը, նրանից յետոյ մնացիմ երկու որդիները՝ Լեւոնն ու Միքայէլը»⁹⁶, իսկ Մովսէսն ապրել եւ գործել է Շուշիում: Մովսէս-բեկը թողել է հինգ զաւակ՝ Ասլան, Ալեքսանդր, Նիկողայ, Աբրահամ եւ Աննա, իսկ յայտնի հասարակական-քաղաքական գործիչ, բժիշկ, բանաստեղծ-երգիծաբան Լեւոն Աթաբէկեանը (1875-1918) Նիկողայ-բեկի որդին էր (Յակոբ իւզբաշու ծոռը): Նա 1917թ. դեկտեմբերին եղել է Հայոց ազգային խորհրդի Բաքուի մասնաճիւղի փոխնախագահ, այնուհետեւ՝ անդամ եւ զոհուել է 1918թ. մարտի 20-ին, այդ քաղաքում տեղի ունեցած ազգամիջեան ընդհարումների ժամանակ՝ հաշտարար բանախօսի առաքելութիւն կատարելիս⁹⁷: Լեւոն Աթաբէկեանի դուստրը՝ Մարգարիտը (1913-1995), բանասիրական գիտութիւնների թեկնածու էր: Ի դէպ, Հայկական սովետական հանրազիտարանում Աթաբէկեանների գերդաստանից ներկայացուած են վերոյիշեալ Լ. Ն. Աթաբէկեանը, Յովսէփ Ներսէսի Աթաբէկեանը (հրապարակախօս, թարգմանիչ, գիւղատնտես, 1870-1916) եւ վերջինիս որդին՝ Մոսկուայի աւիացիոն ինստիտուտի էլէկտրատեխնիկայի ամբիոնի վարիչ, տեխնիկական գիտութիւնների դոկտոր, պրոֆեսոր Գրիգոր Աթաբէկեանը (1908-1966)⁹⁸, որի քոյրը՝ Անահի-

⁹⁶ ՊՈՏՏՈՅ Վ., նշ. աշխ., էջ 58:

⁹⁷ ՎՐԱՅԵԱՆ Ս., Հայաստանի Հանրապետութիւն, Երեւան, 1993, էջ 173:

⁹⁸ ՀՄՀ, հ. 1, Երեւան, 1974, էջ 125-126:

տը, 1953-ից Մոսկովայի Տիմիրեզեզեւի անուան գիւղատնտեսական ակադեմիայի բուսաբանութեան ամբիոնի պրոֆեսոր էր: Յովսէփ Աթաբեկեանի կինը Գերմանիայում երաժշտական կրթութիւն ստացած եւ կատարելագործուած Հեղինէ Աւակիմեանն էր: Ներսէս-բեկի միւս որդիները (Ասլան-բեկի թոռները)՝ Տիգրանը եւ Միքայէլը իրաւաբաններ էին, Դաւիթը (1876-1964)՝ մանկաբոյժ էր, բժշկական գիտութիւնների դոկտոր, պրոֆեսոր, ՌՍՖՍՀ վաստակաւոր բժիշկ, իսկ Ասլանը՝ ճարտարագէտ էր:



Յովսէփ Ներսէսի Աթաբեկեանի
տապանաքարը

Բժշկական գիտութիւնների դոկտոր, պրոֆեսոր էր նաեւ Մովսէս-բեկի որդին՝ նշանաւոր էնդոկրինոլոգ Ալեքսանդր Աթաբեկեանը: Նրա կինը Եկատերինա Նիկողաեւնա Սոկոլովան էր: Ա. Մ. Աթաբեկեանը թողել է երեք զաւակ՝ Ալեքսանդր, Արսէն եւ Արիանա: Ականաւոր էնդոկրինոլոգի աւագ որդին՝ Ալեքսանդրը (1896-1952) եղել է Ստալինգրադի (Վոլգոգրադ) մեխանիկական ինստիտուտի դոցենտ: Ա. Մ. Աթաբեկեանի միւս որդին՝ Արսէնը (1902-1960) եւս բժշկական գիտութիւնների դոկտոր էր: Վերջինիս դուստրը՝ Մոսկովայի էնդոկրինոլոգիական բուժարանի վարիչ Եկատերինա Աթաբեկեանը, շարունակում է հօր եւ պապի

գործը: Նրանք բոլորն էլ մեծ ծառայութիւններ են մատուցել հայրենական գիտութեանը:

Այսպիսով, սոյն գլխում կազմուած եւ ամբողջացուած է Կոնսապատի Աթաբեկեանների տոհմածառը՝ սկսած 18-րդ դարի կէսերից մինչեւ 20-րդ դարի կէսերը: Յոյց են տրուած նաեւ տոհմի անդամների տեղաշարժերը եւ հետագայ տարածումը՝ սկըսած Զրաբերդ գաւառի Կոնսապատ գիւղից մինչեւ Բաքու, Թիֆլիս, Երեւան եւ էջմիածին, ինչպէս նաեւ Ռուսաստան, Պարսկաստան ու Եւրոպա:

ԱՐՏԱԿ ՄԱՂԱԼԵԱՆ

The family trees of the noble-Melik's of Artsakh (Materials about the Armenian Melikdoms)

(summary)

ARTAK MAGHALYAN

The Armenian history is rich with Melik (noble) families that have a prosperous past. For several decades, (beginning 17th century up to the first quarter of 19th century), the representatives of those families were the leaders of the national liberation movement. The most famous of them were Melik-Beglaryan of Gyulistan, Melik-Israelyan of Jraber, Hasan-Jalalyan of Khachen, Melik-Shahnazaryan of Gegharkunik and Varanda, Melik-Eganyan (Melik-Avanyan) of Dizak and Melik-Aghamalyan of Yerevan. Unfortunately, not all descendants of those families were known.

1. During our research we reestablished and completed the family trees of the Melik-Shahnazarian's of Varanda and Atabekian's of Jraber. In this research we reached to the conclusion that Atabekians are from Melik-Israelians.

2. Our research shows the resettlement and further spread of these families. Melik-Shahnazarians went from Gegharkunik to the province of Varanda of Artsakh. In the case of Atabekian it has moved from the village of Kusapat to Baku, Tiflis, Yerevan, Etchmiadzin and to Russia, Iran and Europe as well.

3. Enough information has not been given in the resources about the women of these noble families, that's why our research doesn't contain anything about them.